

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Կը բաւէ միայն աչքէ անցընել եւրոպական այլ մա- նաւանց անդլիական թերթերը՝ Նուպար փաշայի մահուան յաջորդ օրերուն, զազափար մը կազմելու համար թէ աշ- խարհի մէջ ի՞նչ զիրք մը կը բռնէր այն մեծ Հայը որ ա՛լ պատմութեան կը վերաբերի: Ամենքն ալ միաբե- րան կը խոստովանին թէ մարդ մըն էր ան որով կրնար հպարտանալ ո՛ր եւ է ազգ, եւ որ նշանաւոր պիտի հանդի- սանար ո՛ր եւ է երկրի մէջ: Մեծ իտէլալ մը ունեցած, եւ իրագործած էր զայն — իր որպէզրած երկրորդ հայրենիքը ազատել զայն վարդապետութենէն ու կամա- յականութենէն, ու անոր տալ մեծագոյն բարիքը որ կայ երկրի վրայ, — Արդարութիւնը: Իր փառքի մեծագոյն տիաղոսը կը նկատէր ասիկա, և իրաւամբ: Եզիպտոսը սուլթանէն ազատելէ յետոյ, ամբողջ ուղտովը ջանահար եղաւ անոր ուրոյն կեանքը ապահովել: Բայց կարելի չէր կուտիլ խտիվութեան ակամարութեանը եւ խելագարու- թեանը դէմ, որոնք վերջ ի վերջոյ օտար զբաւումը առաջ բերին: Ա՛լ իր գերը կ'աւարտէր այդտեղ, ու բաշտեցաւ, աշխարհակախներուն թողնով երկիր մը որ՝ արդէն անոնց- մէ առաջ՝ իր շնորհիւ՝ քաղաքակրթութեան ամէն բարիք- ները սկսած էր վայելել:

Իբր Հայ՝ Նուպար փաշայի կատարած գերին վրայ կը խօսինք այլուր: Այստեղ կը ներկայացնենք իր կեն- սադրութիւնը, որ կերպով մը Եզիպտոսի վերջին կէ- պարու պատմութիւնն է:

Նուպար փաշա ծնած էր Իզմիր, 1825ին, երբ Եզիպ- տոս Օսմանեան կայսրութեան մէկ աչքէ հեռու կուտակա- լութիւնը կը կազմէր: Հայրը կառավարական ստորապատ պաշտօնեայ մըն էր, որ իր պաշտօնավարութեանը միջո- ցին յարաբերութիւն ունեցած էր Մէհմէտ Ալիի հետ, եւ իր ազգականներէն մին ալ, Պօղոս պէյ, Մէհմէտ Ալիի ազգեցիկ խորհրդականներէն մին էր:

Տղայութեանը արդէն, Եզիպտոսի ապաղայ նախա- րարապետը մեծ ընդունակութիւններ ցոյց կուտար, եւ

Եւրոպա զրիւնեցաւ կրթութեւն համար: Նախ պարոց զրին զինքը Զուլեյքերիա, յետոյ Թուլուզ, ուր կատարեալ ֆրան- սերէն սորվեցաւ:

Տասնութիւնը տարեկան էր երբոր Եզիպտոս գնաց, եւ առեւտրական ու արտաքին գործերու նախարարութեան մէջ պաշտօն մը տրուեցաւ իրեն: Երկու տարի յետոյ, Պօղոս պէյի միջոցաւ, Մէհմէտ Ալի փաշայի ընթերցող ու թարգման անուանուեցաւ: Այդ թուականին, 1842, խտիվական արդի գերդատանին հիմնադիրը վերջնապէս ընդունած էր Եւրոպայի պետութիւններուն իրեն հարկա- զրած իրաւախոհութիւնը, որով Մէհմէտ Ալի վերջնապէս կը հրաժարէր Սուրիան ու թերեւս ամբողջ Թիւրքիան զբաւելու խորհուրդէն, ու ասոր փոխարէն Եզիպտոսի փա- խարքայութիւնը իրեն եւ իրեն ժառանգորդներուն կը թող- ուէր՝ Գրան գերիշխանութեան ներքեւ:

Մէհմէտ Ալիի առողջութիւնը սկսած էր ակարսնալ այդ միջոցին, եւ քնատութենէ կը առաւակեր: Պաշտօնի մէջ, երիտասարդ Նուպարի զլխաւոր զբաղումն էր զիշեր- ները կարգալ Մէհմէտ Ալիի: Ծերունի մարտիկ քաղաքա- գէտը ամէնէն աւելի շահագրգռող գործերն էին պատմա- կան զրքերը, եւ Նուպար, իր երիտասարդութեան առա- ջին տարիներուն մասին խօսած ատեն, կ'ըսէր միշտ թէ իր կրթութեան մեծագոյն մասը կը պարտէր այդ զիշերա- յին ուսումնասիրութեանց, Մէհմէտ Ալիի սնարին մօտ:

Մէհմէտ Ալի շատ ակործած էր իր երիտասարդ բար- սուղարէն, ու բարձր գաղափար մը կազմած անոր դա- տողութեանը, խելացութեանը մասին, այնպէս որ որոշեց զանի իբր առաջնորդ, մենտոր ու ընկեր տալ իր Խպրա- հիմ որդւոյն, երբ սա ճամբորդեց կ. Պոլիս ու Եւրոպա: Եւրոպան անձանօթ աշխարհ մըն էր Խպրահիմի: Բայց Նուպար լաւ կը ճանչնար զայն, եւ իր ծանօթութեանը միացուց հետաքրքրութիւն մը, գաղափարներու իւրացում մը եւ ներքին խորհրդածութեան ընդածին ոյժ մը որոնք ամէն զրական ուսումնասիրութիւնները կ'արժեն: Խպրա- հիմ, ի ծնէ վննուորը, և երիտասարդ Նուպար, ի ծնէ պե- տական—մարդը, Զայցելեցին Եւրոպայի զլխաւոր մայրա- քաղաքները: Ամէնէն աւելի հաճոյական յիշատակ մը պահեցին Լոնտոնէն, ուր երիտասարդ թաղուհին եւ իր ամուսինը շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրին իրենց:

Այդ ճամբորդութեան վախճանին, ուղեղի հիւանդու- թիւնը ուսկից կը նեղուէր Խպրահիմ՝ սուր կերպարանք

որ առաւ, եւ իրօք խելագարի պէս էր: Նուպար յաճախ
 կը պատմէր թէ իր կեանքին ամէնէն գոնգակ ու ծանր օ-
 րերը՝ Կ. Պոլսէն Եզրիպտոս զարձած առննին անցուցած
 է: Իպրահիմի հետեւորդներուն մէջ գտնուող բրիտանացի
 ներք կերպով մը իմացան թէ իշխանին գիտաւորութիւնն
 էր զիրենք ամենքը մէկէն կախել տալ, անպամ մը որ ծո-
 վուն բացը ելլէին: Թիւրք նաւապետին գիմեցին ու հար-
 ցուցին սր, եթէ այդպիսի հրաման մը տրուէր իրեն իր
 տիրոջ կողմէ որ ակներեւ կերպով խելագար էր, պիտի
 հաւանէ՞ր ի գործ դնել հրամանը: Նաւապետը պատաս-
 խանեց թէ անշուշտ շատ պիտի ցաւէր եթէ այդպիսի բան
 մը պատահէր, սակայն իր պարտքն էր հնազանդիլ բրէնս
 Իպրահիմի հրամաններուն. բայց աւելցուց թէ Նուպար ա-
 մէն ժարդէ աւելի իշխանութիւն սնէր իշխանին վրայ, եւ
 սրչափ առնն որ Նուպար իր բովը բլլար՝ իշխանը պիտի
 վարանէր թերեւս սպասուած հրամանը տալու: Այս թե-
 լապրութեանը համեմատ շարժելով, Նուպար վայրկեան
 մը չհեռացաւ իշխանին բովէն՝ Կ. Պոլսէն Ալեքսանդրիա
 ամբողջ ճամբորդութեանը միջոցին, անընդհատ խօսքի
 բունեց զանի՝ երբս արթուն էր, եւ, նոյն իսկ երբ իշխա-
 նը կը բնանար, վայրկեան մը աչքը անոր վրայն չէր
 վերցնէր: Երբս վերջապէս փորձանքը անցաւ, Նուպար,
 ինչպէս կ'ըսէր, ինքզինքը ժամանակէն առաջ ծերացած
 զգաց:

Մէհմէտ Ալի հրամարեցաւ 1848 սեպտեմբերին եւ
 մեռաւ յաջորդ օգոստոսին, մինչդեռ Իպրահիմ Եզրիպտո-
 սի փոխարքայութիւնը վարեց սեպտեմբերէն նոյեմբեր մի-
 այն: Իպրահիմի՝ Ապպաս փաշան յաջորդեց, եւ իր կարճ
 իշխանութիւնը, որ տեւեց 1848 նոյեմբերէն 1854 յուլիս,
 հանգիստ առաւ Եզրիպտոսի:

1850ին, Նուպար Լոնտոն զրկուեցաւ՝ անգլիական
 կառավարութեան ներկայացնելու համար Մէհմէտ Ալիի
 մահուանը առթիւ Սուլթանին ինչ ինչ պաշանջումներուն
 անիրաւութիւնը, եւ յաջորդեցաւ իր տեսութիւնները ըն-
 գունել տալու լորտ Բալմորալընի: Իր գիւնանագիտական ա-
 ռաջին յաջողութիւնը եղաւ ասիկա: Քիչ յետոյ, Եզրիպտոսի
 ներկայացուցիչ կարգուեցաւ Վիէննա, պաշտօն մը զոր
 կորսնցուց Ապպաս փաշայի մահուանը, եւ Եզրիպտոս դար-
 ձաւ Ապպասի եղբայրը Սայիտ, փոխարքայութիւնը վա-
 րեց 1854էն 63: Շատ շանցած, Նուպար նորէն առաջ
 անցաւ իր ճարպիկութեանը շնորհիւ, եւ 1856ին պաշ-
 տօնի գլուխ անցաւ: Սայիտ փաշա այդ միջոցին Ֆերտի-
 նան տը Լէսթըրի արտօնութիւն առած էր Սուէզի ջրանց-
 քը բանալու: Անգլիացիները, որ վերջէն ամէնէն աւելի
 օգտուողները պիտի ըլլային այդ մեծ ձեռնարկէն, ան ա-
 տեն անտախի հակառակ կին ծրագրին: Ուստի անգլիա-
 կան կառավարութիւնը գաղափար յղացած էր ցամաքա-
 յին ճամբայ մը հաստատելու, որով Սուէզի ջրանցքին
 հարկ չպիտի մնար: Այս ձեռնարկին համար Լոնտոնի եւ
 Գահիրէի միջեւ բանակցութիւնները եւ ատենց հետեւան-
 բով անապատին մէջէն Գահիրէ-Սուէզ կրկնաթուղիին շի-
 նութիւնը յանձնուեցան Նուպարի, որ մեծ յաջողութեամբ

առաջ վարեց զանոնք: Գահիրէի մէջ Ֆրանսական ազգե-
 ցութիւնը հակառակ էր այդ ցամաքային ճամբուն, եւ շատ
 նեղացաւ Նուպարի ընձեռած աշակցութեանէն այդ ծրագրին:
 Հետեւաբար, փոխանակ իր ծառայութեանցը փոխարէն
 վարձատրուելու, բանակցութեանց վախճանին՝ պաշտօնէ
 զրկուեցաւ:

1863ին Սայիտ մեռաւ եւ իրեն յաջորդեց իր եղբոր-
 որդին Իսմայիլ, որ քիչ յետոյ պաշտօնի կաշեց Նուպարը,
 1866ին ալ հանրօգուտ շինութեանց նախարար անուանե-
 լով զանի: Քսան տարիէ ի վեր Եզրիպտոսի ծառայութեան
 մէջ կը գտնուէր ան, ու երթալով բարձրացած էր, հետզհե-
 տէ ձեռք բերելով կատարեալ ծանօթութիւն մը ոչ միայն
 եգիպտական պետական գործերուն, այլ եւ եւրոպական
 քաղաքականութեանը: Բայց 1867ին է որ Նուպարի ա-
 նունը սկսաւ հոչակուիլ, երբ Կ. Պոլիս դնաց ու Խալիփ
 տիրոջ ստացաւ Ապպալ Ազիզէն Իսմայիլի համար, եւ
 սուլթանէն արտօնութիւն ձեռք բերաւ Եզրիպտոսի ժառան-
 գութեան օրէնքը փոխելու, փոխանակ տիրող գերպատաս-
 նին երկցագոյն անգամին՝ տիրող Խալիփին անդրանիկ որդ-
 ւոյն անցնելով ժառանգութիւնը, եւ զարձեալ Նուպար փա-
 շան էր որ Սուէզի ջրանցքին մասին Եզրիպտոսի ու Թիւր-
 քիոյ միջեւ տիրող գոտարութիւնները հարթեց, եւ միանգա-
 մայն յաջողութեամբ ի զուլս հանեց Ֆրանսայի հետ բա-
 նակցութիւնները: Մինչդեռ Անգլիան իր բոլոր պետական
 մարդերով կը հեգնէր ջրանցքին ծրագիրը եւ կ'ընդդիմա-
 նար անոր, Նուպար լիսիւն ըմբռնած էր անոր տեղեկեա-
 կան կարեւորութիւնը, եւ ջանահնար կ'ըլլար անոր իրա-
 կանացմանը:

Այս բոլոր ծառայութեանցը փոխարէն, Նուպար ստա-
 ցաւ փաշայի տիրոջ, ինչպէս նաեւ ընդարձակ հոյեր,
 որոնք իր հարստութեան հիմը եղան:

1868ին էր որ Նուպար Եզրիպտոսի արտաքին գոր-
 ծերու նախարար անուանուեցաւ: Այդ թուականէն, Ե-
 զրիպտոսի պատմութիւնը՝ զլիաւորապէս Նուպարի պատ-
 մութիւնը ըսել է: Եզրիպտոսը սուլթանէն ազատած էր,
 ու հիմա ձեռք կը զարնէր իր կեանքին մեծ գաղափարին,
 — Եզրիպտոսը ազատել Խալիփէն, ու մանաւանդ Իսմայիլի
 յիմար ու բռնաւոր վարչութեանէն, որ չէր կրնար ըմբռնել
 Նուպարի վարդապետութիւնը թէ օրէնքը գերակշիռ ըլլա-
 լու է վեհապետին կամքէն:

Իր օրինական բարեկարգիչ մըն է որ Նուպար ընդ-
 հուպ փայլեցաւ աշխարհի աչքին: Միջազգային Խառն
 դատարաններու հաստատումը Նուպարի գործն է: Ասոր
 համար ութ տարի մարտնչեցաւ հրաշալի յամառութեամբ:

1868ին, երբ Սուէզի ջրանցքը աւարտուելու վրայ էր
 եւ երբ եգիպտական կառավարութեան վարիչը գեր անվը-
 թար էր, Նուպար մղեց Իսմայիլը Գաբրիէլապոսիոնները
 ջնջելու, եւ անոնց տեղ միջազգային դատարաններ հաս-
 տատելու: Ասկից առաջ, ամէն տէրութիւն իր հիւպատո-
 սական դատարանը ունէր, ընդամենը տասներօթը հատ,
 ամենքն ալ նախանձախնդիր իրենց ազգայնութեան ա-
 ռանձնաշնորհումներուն, ու ամենքն ալ անվերջանալի վէ-

ճերու եւ կարգերու թատերաւայր: Այդ տասնութը գա-
տարաններուն մէջ օրէնք կար, ու չափէն աւելի. բայց
գժուար թէ արդարութիւն գտնուէր: Սրբ Ալֆրէտ Միլնը,
որուն զիրքը Եղիպտոսի մասին՝ տեսակին մէջ առաջինն
է, կ'ըսէ թէ « միջազգային դատարաններու այդ հաստատ-
մանը համար Նուպար արժանի է Եղիպտոսի մշակնա-
կան երախտագիտութեանը, ինչպէս եւ քաղաքակիրթ աշ-
խարհին յարգանքին: » Նոր դատարանները տեղացիներէ
ու Եւրոպացիներէ կը բաղկանային. նախագահը տեղացի
մըն էր, բայց զեր-նախագահը, միշտ Եւրոպացի մը, ի-
րօք գործը վարողն էր:

Նուպարի առաջնորդութեան ներքեւ օրինադիրք մը
պատարաստեցաւ այդ դատարաններուն համար, Գոտ
Նաբուլէոնի վրայ հիմնուած, Եղիպտոսի կացութեան պա-
հանջած ինչ ինչ փոփոխութիւններով: Այդ փոփոխու-
թիւններէն մին՝ հատուած մըն էր արամազրող թէ եթէ
դատարանները վճիռ մը տային ի նուպատ օտարազգիի մը
ընդդէմ եղիպտական պետութեան, վճիռը ի գործ պիտի
դրուէր՝ պետական ստացուածքը զրտուելով: Իսմայիլ
կ'ըսէր միշտ թէ այդ օրէնքը մտցուած էր առանց իր դիտու-
թեանը, ու եթէ անոր իմաստը հասկնար՝ բնաւ չպիտի
հաւանէր նոր օրինադիրքը վաւերացնելու: Յիրաւի կամ
յանիրաւի, այդ օրէնքին հեղինակութիւնը Նուպարի կը
վերագրէր: « Մեր կարծիքն է թէ, կ'ըսէ Թալուզ, եթէ
Նուպար իրօք այդ օրէնքին հեղինակն էր, գժուար թէ
ըմբռնած ըլլար անոր ամբողջ կարեւորութիւնը: Ան-
շուշտ, իր կանխատեսութիւնը զերմարդկային եղած պիտի
ըլլար՝ եթէ առաջուց գուշակած ըլլար թէ այդ օրէնքը
ի՞նչպէս պիտի գործածուէր իր գործիք մը զահընկէց ը-
նելու այն ատենուան խտիւրդ: »

Ելմասական տաղանակին, Միացեալ փոխառութեան, Գլյոյ
պատուիրակութեան, Կոշէն-Ժուպեր բնութեան խառնակ
տարիներուն, Նուպար շատ աչքի զարնող զեր մը չխա-
ղայ եղիպտական քաղաքականութեան մէջ: Շերիֆ փա-
շայի հետ, փոխն ի փոխ կամ նախարարապետ էր, կամ
շնորհազարկ, կամ աքսորի մէջ: Իսմայիլ զկտի բայքա-
յումը կը դիմէր, ու Նուպար որ ասիկա կը տեսնէր, ա՛յ
կարող չէր մարտնչելու իր տիրոջը յիմարութեանը դէմ:

1874ին Նուպար պաշտօնանկ եղաւ եւ ստիպուեցաւ
Եղիպտոսէն մեկնելու: Յաջորդ երկու տարիները զխառ-
րապէս Բարիզ ու Լոնտոն ապրեցաւ, եւ առիթէն օգտուե-
ցաւ կործանելու Իսմայիլի տակաւին վայելած հմայքը,
երեւան բերելով թէ Եղիպտոսի ելմասական տաղանակին
իրական պատճառը ո՛չ թէ հանրօգուտ շինութեանց հա-
մար եղած ծախսերն էին, այլ Իսմայիլի յիմար փառա-
սիրութիւնը որով կ'ուզէր ամբողջ Եղիպտոսի հողին տի-
րանալ, ու այդ նպատակին կը գործածէր պետական փա-
խառութիւնները, այնպէս որ Եղիպտոսի մշակուած հողե-
րուն մէկ հինգերորդին տէր էր արդէն:

Հաւանօրէն, մէկը չկար զոր Իսմայիլ այնչափ ատէր
այդ միջոցին որքան Նուպար փաշան: Բայց Իսմայիլ
անձնական ոխի համար իր անձնական շահերը օտարապետ

ընող մարդ չէր: Բաւական խորամանկ էր տեսնելու հա-
մար թէ իրեն պէտք եղածը եւրոպացի փոխառութեան
վստահութիւնը վերստին ձեռք բերելն էր, և ոտսը լաւա-
պէս միջոցն էր սահմանադրական կառավարութեան մը
ձեւը տալ Եղիպտոսի՝ միջազգային հսկողութեան ներքեւ:
Այս նպատակով վերստին պաշտօնի կանչեց Նուպարը,
նախարարապետ ըրաւ զայն, և ինչորեք Անգլիոյ ու Ֆրան-
սայի կառավարութիւններէն որ նոր նախարարութեան մէջ
իրենց անուանեն ելմասական եւ հանրօգուտ շինութեանց
նախարարները: Անգլիա Սրբ Չարլզ Րովըրզ Ռիլընը
անուանեց, և Ֆրանսա՝ Պ. ար Պլէնիէրը: Անշուշտ, Իսմա-
յիլ կը սպասէր որ անգլեֆրանսական նախարարութիւնը
լոկ անուանական հսկողութիւն մը ի գործ պիտի գնէր: Ինչ-
պէս իր մտերիմներէն մին ըսած է, « Որչտի աւելի ճանչ-
նաց Իսմայիլը, այնքան աւելի անկարելի կը դառնայ չա-
փել իր երկվիմութեան խորութիւնը: » Բայց երբ խտիւր
տեսաւ որ նոր նախարարները մտադիր են լրջօրէն ըմբռ-
նել իրենց պաշտօնը և վերակազմել վարչութիւնը՝ սահ-
մանադրական հիման մը վրայ, սկսաւ ձեռքի տակ գործել՝
անոնց կացութիւնը անտանելի ընելու համար: Նախ փոր-
ձեց ֆրանսացի նախարարը և անգլիացի նախարարը իրար
ձգել, և երկուքը միասին պաղեցնել նախարարապետէն:
Երբոր այս սաղարնքը ի զերեւ ելաւ, իւլմաները զրգոնց՝
յանուն խաւովութեան՝ բողբոջու քրմատոնեայ նախարար-
ներուն դէմ որոնք պաշտօն կը վարէին մահմետական
երկրի մը մէջ: Հանրային պաշտօնատան տոջե ցոյց մը
տեղի ունեցաւ, որու միջոցին խումանը Նուպարի վրայ
յարձակեցաւ հայհուցներով ու նախատինքներով: Խտիւր
ասոր վրայ ծանուց թէ ստիպուած էր տեղի տալու երկրին
կրօնական իշխանութեանց, Նուպարը պաշտօնանկ ըրաւ,
և անոր տեղ կարգեց իր որդին ու ժառանգորդը՝ Թէլֆիզ.
մէն ըսնի շաբաթ ետքն ալ, յայտարարեց թէ Նուպարի
զոհադութիւնը հանդարտեցուցած չէր իր ժողովրդին վի-
րաւորուած նախանձայուղութիւնը, Սրբ Րիլըրզ Ռիլընը
եւ Պ. ար Պլէնիէրն ալ ճամբեց, և նորէն անձնական
միահեծան իշխանութեան հին զրութեանը դարձաւ:

Հակառակ Նուպարի ակնկալութեանը, հակառակ
անգլեֆրանսական նախարարութեան զուխը անցնելէ ա-
ռաջ Լոնտոն և Թերեւս Բարիզ ստացած հաւաստիքներուն,
Անգլիոյ և Ֆրանսայի կառավարութիւնները առանց բողբոջի
ընդունեցին իրենց անուանած նախարարներուն հրաժա-
րեցուցումը: Ոչ մին կրնար միայնակ գործել, և միասին
գործելով պատրաստուած չէին: Իսմայիլ յոյսը ասոր վրայ
գրած էր, և պահ մը թուեցաւ թէ պիտի յաջողէր առ ո-
չինչ զրելու եւրոպացի արժէտէրներուն պահանջները: Բայց
հաշտի առած չէր Նուպարը: Եւրոպացի պահանջատէր մը,
որուն աննկիւրէն վճարումը երկար ատենէ ի վեր կը յա-
պաղէր, Աղեքսանդրիոյ միջազգային դատարանին առջեւ
դատ բացաւ: Վճիռ տրուեցաւ ի նպաստ բողբոջարկուն,
բայց վճիռը լոկ անուանական մնալ կը թուէր, որովհետեւ
դատարանը միջոց չունէր իր հրամանին գործադրութիւնը
բնագատելու: Յանկարծ, զերման կառավարութիւնը ծա-

նուց թէ, իբր մին այն պայմանագիրներէն որոնք միջազգային գատարանները հաստատած էին, պիտի պնդէր որ գատարաններուն վճիռը գործադրութեան գրուէր: Գերմանիա ան ատեն, ինչպէս հիմակ, շատ փոքր շահեր ունէր Եղիպտոսի մէջ՝ բազմաթիւ Ֆրանսայի եւ Անգլիոյ, եւ զժուար է ըսել թէ ինչո՞ւ Պիզմարը իշխանը, որ այդ միջոցին բացարձակապէս կը վարէր Կայսրութեան արտաքին քաղաքականութիւնը, այնպիսի յայտարարութիւն մը կ'ընէր որ Գերմանիոյ զինուորական միջամտութիւնը անհրաժեշտ դարձնել կը թուէր: Այն ատեն ամէն ոք ըսաւ թէ Նուպարն էր որ Գերմանիան անուղղակի կերպով, եթէ ոչ ուղղակի, զրդած էր այդ գործին: Ինչ որ ալ ըլլայ, Գերմանիոյ ձեռնարկը տրամաբանական հետեւանքն էր այն նախազգուշութեան որ, ինչպէս քիչ մը վերը տեսանք, ձեռք առնուած էր 1873ի պայմանագրութեան մէջ, եւ որով Եղիպտոսի պետական ստացուածքը կրնար գրաւուիլ՝ եւրոպացի պահանջատէրի մը առնելիքին փոխարէն: Այն ատենէն որ Գերմանիա առաջ անցաւ իբր պաշտպան եւրոպացի պահանջատէրներուն, Իսմայիլի բազմը վճարուած էր: Ֆրանսա չէր կրնար թողուլ որ Գերմանիա միջամտէ Եղիպտոս, եւ եթէ Ֆրանսա զործէր, Անգլիա ըստիպուած էր անոր հետեւելու: Գերմանական միջամտութեան առաջը առնելու համար, Անգլիա եւ Ֆրանսա ճշնշում բանեցուցին Գրան վրայ, եւ Սուլթանը պարտաւորուեցաւ, իբր Եղիպտոսի վեհապետ, գահընկէջ ընելու Իսմայիլը եւ անոր յաջորդ կարգելու Թէլֆօրը:

Իսմայիլի գահընկեցութիւնը իրօք Նուպարի գործն էր, եւ սակայն աշխարհքի գործերուն սովորական ընթացքովը՝ ուրիշները քաղցին ինչ որ ինք ցանած էր: Թէլֆօրը փաշա Խոսիվութեան բարձրանալուն պէս, երկեակ հսկողութիւնը հաստատուեցաւ, Պ. տը Պլինեիէր վերահաստատուեցաւ իբր Ֆրանսական ընդհանուր քննիչ, եւ հաղարապետ Պէրիկ, այժմ լորտ Գրոմբը, Սըր Ռիվըրզ Ուիլսոնի յաջորդեց իբր ներկայացուցիչ Անգլիոյ: Բիւրփաշա նախարարապետ անուանուեցաւ, եւ Նուպար բաւական ատեն բացը թողուեցաւ: Բարեբաղդութիւն մըն էր թերեւս իրեն համար որ Արապիի ապստամբութեան, Արաբական ռեպուբլիկի ոմբակոծման, Թէլ-էլ-Բէկիի պատերազմին ատեն՝ ո եւ է գործոն մասնակցութիւն չունեցաւ Եղիպտոսի գործերուն մէջ, եւ նոյն իսկ երբ Գահիրէ կը գտնուէր, լսի կը զբաղէր, կամ կ'ենթադրուէր թէ կը զբաղէր, երկրագործութեան ուսումնասիրութեամբ եւ իր ազարակներուն բարոքումով:

Եղիպտոսի համար նոր կացութիւն մը ստեղծուած էր: Անգլիացիները եկած էին, եւ ոչ ոք զիտէր — ոչ իսկ իրենք — թէ գրաւուած առժամանակեայ էր թէ մշտական, ու իրենք քաղաքականութիւնը առ խարխափ առաջ կ'ընթանար Նեղոսի ափերուն վրայ: 1884ին երբ Նուպար փաշա նորէն նախարարապետութեան կոչուեցաւ, իր կեանքին էն տաժանելի տարիները սկսան իրեն համար: Իր զէմ ամէն քայլին անգլիացիները կը գտնէր: Նախ ծանր գժտութիւն մը ունեցաւ իր ներքին գործերու խոր-

հրդականին, Պ. Գլիֆֆըրտ Լոյտի հետ: «Վարժապետի մը պէս եկեր է հոս, կ'ըսէր Նուպար, ու ինծի հետ այնպէս կը վարուի որպէս թէ դպրոցական մը ըլլայի:» Ու անշուշտ բան մը աւելի չէր կրնար դաշիլ իր հպարտ ու զգայուն բնաւորութեանը որքան այսպիսի վարմունք մը: Բայց, ինչպէս կ'ըսէ Սրաւտարտ, «Անգլիացին զուլս ելլելիք մարդ չէր նրբամիտ Հայուն հետ», եւ Նուպար նետել տուաւ Պ. Գլիֆֆըրտ Լոյտը: Նոյնպէս կուտեցաւ ելմտական խորհրդականին, Սըր Էտկար Վինսընդի հետ, 27 տարեկան անգլիացի զինուորական մը: Վերջ ի վերջոյ ուղղակի ընդհարեցաւ Լորտ Գրոմբրի, եւ 1888ին հրաժարեցաւ: Եղիպտոս, ներկայ հանգամանքներուն մէջ, այլ ես պէտք եղածին չափ ընդարձակ չէր իրեն համար: Իրեն պէս պետական մարդու մը փորձառութիւնը ու անհատականութիւնը չէին կրնար հանդուրձել երրորդի մը հսկողութիւնը: Հրամարելէն առաջ սակայն, բոլոր հողուլը ձգնեցաւ բառնալու տարհապարհակ աշխատութիւնը: «Այս բարենորոգման համար ոչեւորեցաւ բոլոր մարդասիրութեամբ որ իր նկարագրին ամէնէն էական յատկանիշներէն մին էր» կ'ըսէ Տէյլի Նիւշը: Անագորոյն տարհապարհակ աշխատութիւնը, որ հազարաւոր տարիներ տեւած էր Նեղոսի ափերուն վրայ, վերջացաւ 1889 զիւտեմբերին:

Յաջորդ հինգ տարիները, Նուպար փաշա անգործ մնաց: Բացի կարճ այցելութիւններէ Եղիպտոս, զիւտարապէս Բարիզ ապրեցաւ: 1892ին, Ապպաս փաշա յաջորդեց իր հօրը: Երիտասարդ, անփորձ իշխան մը, գործելու տրամադիր, բնականաբար շատ զգածուեցաւ իր անգլիացի խորհրդականներուն ինամակալութենէն, եւ վերջ ի վերջոյ իր յարաբերութիւնները Անգլիացիներուն հետ այնպիսի հանգամանք մը ստացան որ իր իշխանութեան շարունակութեանը մասին պահ մը կտակածներ ծագեցան: Հարկ եղաւ նորէն Նուպար փաշայի դիմել, որ 1894ին նորէն նախարարապետութիւնը ստանձնեց: Այս անգամ ա՛լ առջի ընդհարումները չունեցաւ Անգլիացիներուն հետ. անխուսափելիին առջեւ զուլս ծոած էր, աչքի առաջ ունենալով միայն իր որդեգրած երկրին բարիքը: Բայց երկար ատեն իշխանութեան զուլս չմնաց. ճերուութիւնը, կեանքի յոգնութիւնը, եւ մանաւանդ արկածը զոր ունեցաւ եւ որուն մէջ ոտքը կտորեցաւ, 1895 նոյեմբերին մղեցին զինքը վերջնապէս հրաժարելու հանրային կեանքէն, եւ գալու հանգչելու Բարիզ:

Հոն է որ մեռաւ, թողլով յիշատակը մարդու մը որ պետական մարդու հազուագիւտ յատկութիւններով օժտուած էր եւ որ զիտցաւ ի գործ գնել զանոնք յօգուտ մարդկութեան: «Իր յիշատակը, ինչպէս կ'ըսէ Պ. տը Վոլիլէ Ֆիկառօի մէջ, կապուած պիտի մնայ մեծ ու ուժեղ գաղափարի մը, — Արեւելքի վերականգումը այն բարիքովը զոր երբեք ճանչցած չեն հոն, ճշգրիտ արդարութեամբ մը որ կ'ապահովէ զարաւոր ճնշեալները կը եւ զսպէ իրենց տիրոջ ամենակարողութիւնը:»

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՄԱՍԻՆ

Թայնզէն.

Նուպար փաշայի մահուամբ կ'անհետանայ գրեթէ վերջինը այն առաջնակարգ զէմբերուն որոնք զեր մը ունին փոխանցման մեծ շրջանին մէջ որ անգլիական ազդեցութիւնը գերակշիռ բրաւ Եգիպտոս: Բիազ զեռ կ'ապրի իր հին հակառակօրդին վրայ, բայց մինչդեռ Բիազ ինչ ինչ յատկութիւններ ունէր որոնք ակներեւ կերպով կը պակսէին Նուպարի քով, կարելի չէ որ բազմաթիւութեան մանէ իր նախկին մրցակցին հետ այն բարձրագոյն ու հազուադիւր ձիրքերուն մասին որոնցմով Նուպար օժտուած էր: Նուպարի փայլուն իմացականութիւնը եւ խօսակցութեան եզակի հրապոյրը կարելի չէր որ չտպաւորէին ամէն անոնք որ իրեն հետ յարաբերութեան կը մըտնէին: Սըր Ալֆրէտ Միլնըր կ'ըսէ թէ Նուպարի որպէս զայրենակիցները Եգիպտոսի մէջ պարծանքով կը խօսէին միշտ հայ փաշային վրայ, իբր մարդու մը որ «ո եւ է երկրի մը մէջ մեծ մարդ մը ըլլալու չափ ճարտար էր», եւ կը յայտարարէ թէ ճշմարիտ է աստիկա: Արեւելեան մըտքին եւ բնաւորութեան խորին ծանօթութեամբ մը, եւ իր ընդունած ու մեծապէս իրացուցած եւրոպական զարգացումովը, շատ կէտերու մէջ կը մօտենար եւրոպական մեծ օրինակներուն՝ աւելի ժօտէն քան ուրիշ ո եւ է մէկը արդի արեւելեան քաղաքագէտներէն: Արտակարգ կարողութիւն մը ունէր ուրիշներուն մտաւորական վիճակը հասկնալու եւ ինքզինքը անոր յարմարցնելու յաջողակէս, երբոր ինքզինքը ստիպուած կարճըր այդպէս ընելու: Այս կարողութիւնը աներկբայ հետեւանքն էր իր մարդկային լայն համակրանքներուն, կամ թերեւս աւելի ճիշդ ըլլայ ըսել իր խորին եւ անկեղծ շահագրգռութեանը՝ ամէն տեսակի եւ աստիճանի մարդերու համար: Այնքան անխոնջ որքան գրաւիչ խօսող մըն էր, եւ լաւագոյն պիտի համարէր իշապան տղայ մը կանչել տալ ու հետը խօսիլ՝ քան թէ իր այդ տաղանդը անգործ պահել: «Ապրող մարդ մը, կին մը կամ տղայ մը չի կայ որ նախընտրած չըլլայի ճանչնալ, քան թէ չճանչնալ» ըսաւ անգամ մը անգլիացի ծանօթի մը, եւ ով որ ճանչցած է զինքը՝ չկրնար տարակուսիլ այս խօսքին անկեղծութեանը: Բայց, մինչ հաստատօրէն կը հաւատար թէ մարդկութեան ուսումնասիրութեան յարմարագոյն առարկան սարգն է, իր նմաններուն նկատմամբ ունեցած շահագրգռութիւնը բնականօրէն չէր լուրի: Իրապէս մարդասէր էր, աղքատին ու տկարին համար իրական նկատառութեամբ մը եւ անոնց վիճակը մեղմելու իրական փափաքով մը, որ անշուշտ հազուադիւր է իր դասակարգին մարդերուն մէջ: Պէտք չէ ըսել թէ իր զիրքը կամ անձնական մեծ շահերը պիտի գոհէր այս կամ այս կարգի զբաղմունքներու: Բայց իր բարի ու բանիմաց վարմունքը բնիկ պաշտօնեաներուն հանդէպ՝ երբ երկաթուղիներու վարչութեան զլուխն էր 1865ի քոլերա-

յին տանն, եւ՝ անգլիական գրաւումէն յետոյ՝ տարհաս պարհակ աշխատութիւնը նուազեցնելու համար ցոյց տըւած եռանդը կ'ապացուցանեն թէ անկեղծ էր ան:

Նուպարի խօսակցութեան բացառիկ յատկանիշներուն մին էր խօսքի շիտակութիւն մը, նոյն իսկ երբ անախօրժ զիտողութիւններ ունէր ընելիք: Առանց խղճահարութեան կ'ըսէր Ֆրանսացիներուն թէ Սըտանը փոխած էր իրենց զիրքը Եւրոպայի մէջ, եւ ամէն անգամ որ հարկը ներկայանար՝ նոյնպէս առանց քաշուելու կը խօսէր իր տիրուջը խտրիլին կամ Անգլիոյ ընդհանուր հիւպատոսին: Վարմունքի այս անօթեկեթութիւնը, աւելորդ է ըսել, չէր նշանակեր թէ ճշմարտութիւնն էր որ կ'ըսէր: Ըսողներ եղած են թէ այդ կերպը ընտրած էր իբր լաւագոյն եղանակը պատրելու: Գուցէ իսկ ատոր մէջ տեսակ մը փոխաբիւնութիւն կը գտնէր այն ստրկութեանցը որով, եթէ ըսուածը ճշմարիտ է, ստիպուել էր մաղցելու իշխանութեան կատարը: Այն մարդը որ իր անկեղծ վարպետին համար կ'ըսէր, «Իսմայիլ ուրիշ բան չէ բայց եթէ անունը որով հրովարտակներս կը ստորագրեմ», սրտին մէջ շատ ողս ու գառնութիւն ունէր որպէս զի ուրիշներուն խնայէր, եւ իր յաջորդաբար ծառայած վեց իսլամ իշխաններուն ձեռքէն չէր միայն որ յարգանքի պակասի գասնութիւնը կըրօծէր: 1884ին Պօսֆոր Էթիոպիէնի ջնջման առթիւ ծագած խնդրին տանն, եւ պարձեալ Հանրային Պարտքի անտուկին «յատկացուած հասոյթներու» համար յառաջ եկած զմտութեան միջոցին, խորհեցաւ թէ Անգլիա ճըզճիմ վարմունք մը ունեցած էր իրեն նկատմամբ, եւ տաքակոյս չի կայ թէ իրաւունք ունէր: Երկու պարագային մէջ ալ՝ մեր թելադրութեանը վրայ գործեց, եւ երկու պարագային մէջ ալ զինքը բացը թողուցինք եւ մատնեցինք զինքը ամէնէն դառն նուաստացումը կրելու Ֆրանսացիներէն: Հակառակ մեզի հետ ունեցած կոխներուն՝ թէ՛ այս եւ թէ՛ ուրիշ գործերու մէջ, ինչպէս ոռոգման պաշտօնեաներու անկախութիւնը եւ օստիկանութեան զիրքը, սրոնց մէջ ինքն էր անխրաւը, Նուպար մեծ գաղափար ունէր «Արեւմուտքի թիւրքերուն մասին», ինչպէս կը կոչէր Անգլիացիները: Անոնց նկատմամբ ունեցած սքանչալցումը կոյր սքանչալցում չէր: Գիտէր անոնց թեթութիւնները ինչպէս եւ արժանիքները: Բայց կը ճանչնար անոնց պարկեշտութիւնը. կը խնդար անոնց վրայ որոնք Անգլիացիներուն կը վերադրեն մաքիավելական հեռաւոր գիտաւորութիւններ, ու՝ միանգամայն՝ բազմաթիւ կախումով ծամանակի մը՝ հասկցաւ թէ Անգլիացիները Եգիպտոս պիտի մնային կամայ թէ ահամայ, եւ թէ աստիկա կացութեան լաւագոյն ելքն էր եգիպտական ժողովրդին համար: Ճշմարիտ է թէ մերթ ընդ մերթ աքացեց՝ սլաքներուն դէմ՝ եւ իր իսկ լաւագոյն դատողութեանը դէմ, եւ սրամտօրէն երեւան հանեց թէ ուզածը իրօք ինչ էր երբոր կ'ըսէր թէ ինք կը բաղձար «գրաւումը բայց ո՛չ վարչական գրաւումը»: 1888ին, յայտնի է աստիկա, ո՛չ միայն խտրիլը զրգեց զիմազրելու լրտ Գրոմբրի, այլ եւ Լոնտոնի մէջ իր տեսութիւնները ուղղակի պարզեց Ար-

տաքին գործերու նախարարութեան: Բայց երբ պաղարիւնութիւնը գտաւ, հասկցաւ թէ Եղիպտոսի պէտք եղածն է լոկ արգարութիւն եւ ջուր, եւ թէ Անդլիա, ու Անգլիա՝ միայն կրնար եւ կ'ուզէր անոր սալ երկուքն ալ: Նուպար, բոլոր եղիպտացի պետական—մարդերուն պէս, Ֆրանսա, ցիններ չէր սիրեր Եղիպտոսի մէջ: Հասկցաւ անոնց զի տաւորութիւնները Վերին Նեղոսի վրայ, և յայտարարեց, մեր Բարիզի թղթակցին յիշած յատկանշանական խօսքերովը, թէ Անգլիա չէր կրնար ինքզինքը ենթարկել սա վտանգին որ առտու մը արթնանալուն զրոշակ մը, տասնապետ մը եւ չորս մարդ գտնէր հոն, — բաւական ճիշդ գուշակութիւն մը Ֆաշտոսայի միջպակակին:

Հաւանորէն Նուպարի ամէնէն մեծ գործերը եղան խտրութեան յաջորդութեան արդի կարգին ապահովում մը եւ խառն Գատարաններուն հաստատումը — գործ մը որուն համար իրաւամբ հպարտ էր: Այդ հաստատութեան թերութիւնները ինչ ալ ըլլան — եւ բաւական աչքի զարնող են — Կոնստանտինոպոլիսը, յայն հաստատուելու համարձակութիւնը գոտարութիւնները ահպին էին, և Նուպարի զիւանդիտական ծարպիկութիւնը եւ համբերութիւնը ոչ մէկ տունն այնքան նշանաւոր եղան որքան այդ գատարաններուն ստեղծմանը առաջնորդող երկար եւ կնճուտ բանակցութեանց միջոցին: Հաւանորէն եթէ սկիզբէն սրտշակի ցուցուցած ըլլայինք թէ Եղիպտոս եկեր էինք՝ մնալու համար, Նուպար շատ տարբեր աջակցութիւն մը պիտի շնորհէր մեզի՝ մեր նոր բարենորոգութեան գործադրութեանը մէջ: Պէտք եղածին չափ խնայցի կը՝ աւանդակ շատը գնահատելու համար, թէպէտ մէկ քանին հակառակ էին իր անձնական նախապաշարումներուն եւ բաղձանքներուն: Թէպէտ, ինչպէս Սրբ Ալֆրէտ Միլնըրը կ'ըսէր, ինքն իսկ կերպով մը «վերին զիտող» մըն էր, հանրացումներու համար հրայրքով մը եւ ձիրքով ուր, եւ մանրամասնութիւններու մասին անհամբերութեամբ մը, եւ սակայն պատրանքներ չունէր այն շինծու ազգակներուն մասին, զոր ուրիշներ մերթ ընդ մերթ կ'արձակէին առաւել կամ նուազ անկեղծութեամբ: Երբոր իր առջեւ «Եղիպտոսը Եղիպտացիներուն» կ'ըսէին, ուսերը կը թօթուէր ու կը պտտասխանէր, «Եղիպտացի՛ չի կայ» — ինչ որ բաւական ճշմարտ է՝ հին տիրող գաստակարգին վերաբերմամբ: Իր լաւ եւ իր գէշ յատկութիւններէն մէկ քանին — իր հայեացքի լայնութիւնը, օրինակի համար, եւ իր անհամբերութիւնը՝ պղտիկ բաներու յարատեւ ու շարունակեան և զրամական նկատողութիւններու մասին — կրնան հաւանորէն վերադասելու գաստիարակութեանը զոր ստացաւ այն «հանձարեղ բարբարոսին», Մէլհիմ Ալիի, ձեռքին տակ, կուրքը իր երիտասարդութեան, որուն համար մինչեւ վերջին ամենախորին յարգանք ու սքանչալցում ունեցաւ:

Տեյի Նիուզեմ՝
Ըսել թէ Նուպար անհնապէս լաւագոյն պետական—

մարդն էր զոր Արեւելքը արտագրած ըլլայ արդի ժամանակներուն մէջ, իրեն հարկ եղած մեծարանքը մտտուցանել պիտի չըլլար: Ասիկա զինքը բազմաթիւութեան զնել պիտի ըլլար ոչինչներու հետ: Արեւելքը պետական մարդիկ չարտագրեր, այդ անունին մեր ըմբռնած իմաստովը: Տեսակ մը մեծ մարդիկ կ'արտագրէ, ինչպէս Մէլհիմ Ալին, որ բարբարոս հրայրք մը ունէր արգարութեան համար եւ զայն ի գործ դնելու բարբարոս եղանակ մը՝ անիրաւ դատարանները եւ զօշաքաղ կառավարիչները մերթ ընդ մերթ գանակոծելով, որպէս թէ ատիկա կարենար մշտական բարիք մը առաջ բերել: Նուպար ո՛չ միայն արեւելցի պետական—մարդերուն լաւագոյնն էր, այլ եւ նշանաւոր պիտի հանդիսանար՝ ո՛ւր որ ալ ըլլար, ամէնէն աւելի զարգացած ընկերութեան որպէս քաղաքական ասպարէզին մէջ: Նուպարէն աւելի բարի, աւելի շէնշող, աւելի սրամիտ, աւելի զրաւիչ հիւրընկալ մը եղած չէ երբէք: Հիմակ որ այլ եւս չիկայ ինքը, Գահիրէն այլ ևս առջինը պիտի չլուծի անոնց սրտնք ճանչցած են զայն Նուպարի մասնակը: Այցելուն որ ճանչցած է Եղիպտոսը եւ իր առաջնակարգ պետական մարդը ութսունական թուականներուն, կանոց պիտի առնէ թերեւս հանրաձայնօթ տան մը առջեւ, որ Շէրհորոս օրթէին ու երկաթուղիին կայարանին մէջ տեղը կը գտնուի, և անոր նախկին բնակիչին յիշատակները պիտի մտաբերէ: Մտքին առջեւ պիտի գայ Նուպարը նոտած իր անկիւնը աթոռին վրայ, պատահանին մօտ որ կը նայէր տունը փողոցէն բաժնող բարձր պատին խոշոր դռնէն մեկնող ճեմելիքին, եւ երեւակայութեամբ պիտի ունկնդրէ Արեւմուտքի եւ Արեւելքի լաւագոյն խօսողներէն մէկուն: Թէպէտ խօսելու արուեստին մէջ վարպետ մը, Նուպար սակայն խօսելու հաճոյքին համար չէր խօսեր երբեք: Արուեստը արուեստին համար սիրող մարդ մը չէր: Իր խօսակցութեանը մէջ ամուր, լուրջ նիւթեղէն կար, բայց անսպաս զուարթամտութեամբ, սրութեամբ, եւ իշւուռքով: Անգլիական զրաւումէն յետոյ Նուպարի տուած այցելութեանցս մէկուն միջոցին, խոսակցութիւնը դարձաւ եկաւ Եղիպտոսի ինքնօրինութեան քիչ շատ վերացական նիւթին: Ճիշդ այդ միջոցին լուրս Տըֆրին սոքով զըլխով կ'աշխատէր իր վարչական վերակազմութեան յատակաձեւներուն:

— Ինքնօրինութիւն, բացազանչեց Նուպար, ինչ ըսել կ'ուզեն ինքնօրինութիւնով: Թեմիզի՛ վրայ ինքնօրինութիւն է ատ: Բայց ասիկա Նեղոս է: Կ'ուզեմ որ սահմանեն այդ ինքնօրինութիւնը: Նիամ Նիամները ինքնօրինութիւն ունին: Գիտէք թէ ո՛վ են Նիամ-Նիամները: Այո, մարգակերներ են, հարաւային Սուտանի կողմը: Լաւ սրբիմ, երբոր արքունի տան գերին թուղուրիկ երախայ մը կը տանի նորին Նիամ-Նիամ վեհափառութեան ներկայութեանը՝ նորին վեհափառութեան նախաճաշին համար, ատիկա Նիամ-Նիամներուն ինքնօրինութեան մաս կը կազմէ:

Բայց այս խօսակցութեան կականը՝ պատկերացումն էր, Նուպարի մեջկատակը: Իր անկիւնէն օտքի ելած էր,

եւ իր թեթեւ, առաձգական քայլափոխումը, ֆէսը քիչ մը մէկզի ծոած՝ ինչպէս իր սովորութիւնն էր, Նուպար կը ներկայացնէր երեւակայական գերին Նիամ-Նիամ վեհապետին առջեւ գողգողահար:

—Է՛, հիմա, my dear, ըսաւ Նուպար երբոր նըստաւ՝ աչքերը քթթելով, մէյմէկ խահուէ խմենք նորէն:

Յաճախ, երբոր Նուպար անպիտան կը խօսեր, ֆրանսական ոճին կը հետեւէր. այդպէս, mon cheri աեղ my dear: Ու միշտ սա խօսքը, «Մէյմէկ խահուէ խրմենք նորէն:» «My dear, մի՛ երթաք զեռ. կեցեք մէյմէկ խահուէ ալ խմենք նորէն:» Իր զուարթամտութեան ըմբռնումովը եւ ձեւապաշտութեան մասին ունեցած անտարբերութեամբը, Նուպար բնա՛ւ Արեւելցի չէր: Յաճախ իր վեճերն վրայ տեսած եմ բարեհամբոյր համբերատար ձանձրոյթ մը, երբոր տեղացի այցելուներու տողանցութիւն մը կնճուսա խոնարհութիւններ կ'ընէր իր առջեւ, իւրաքանչիւր ոք մէջքը ծակելով, ճակատը գրեթէ գորգին քուռելով՝ եւ բաց ափովը խոնարհութեան երեւակայական փոշին աւելելով:

Ուրիշ յատկանիշ մը որ Նուպարը կը զանազաններ աւանդական Արեւելցիէն՝ իր մարդասիրութիւնն էր, որ բմահաճ զրուսի մը արդիւնքը չէր, այլ իբր օրինակ մը կը ներկայանար, արեւմտեան բարձրագոյն ըմբռնումին պէս: Նուպարի մարդասիրութիւնը աչքի զարնոյ կերպով մը երեւան եկաւ 1865ի քոլերային առեն, երբ ինք անձամբ կը հսկէր հիւանդներուն պէտքերուն, մինչդեռ խափվը, Խամայիլ, համաճարակին վայրէն փախած էր:

Ազատական ոգիի պակաս մը կար Նուպարի մէջ: Ազատական մըն էր ինքը, մինչեւ եղունգին ծայրը, բայց ո՛չ տեսակ մը խանդավառներու աջ ու ձախ շնայող խառնուածքովը, որոնց կարծեցեալ ազատականութիւնը աւելի՛ շարիք կը պատճառէ քան բարիք: Եղիպտոսի մէջ Նուպարի կատարած գործը ի՛նչ էր եթէ ոչ ազատականութիւն՝ բարձրագոյն ու զեղեցիկագոյն տեսակէն:

Նուպարի նկատմամբ Եւրոպայի համարումին ամէնէն պերճախօս հաւաստիքը եղաւ, հայկական տափնապինէն սաստիկ առենը, Անգլիոյ եւ Եւրոպայի մէջ հանրային կարծիքը վարող շատ անձերու ըրած սա թելադրութիւնը թէ միջնորդ կարգելու էր զինքը իր հայրենի Հայաստանին եւ զայն հարստահարողին միջեւ, եւ թէ Հայաստանի շնորհելու էր տեսակ մը ինքնօրէն կառավարութիւն՝ եւրոպական երաշխաւորութեան ներքեւ: Եթէ աշխարհի մէջ մարդ մը կար որ այդ գործը կրնար ընել, ան ալ Նուպարն էր: Բայց խոչընդոտներ կային որոնց մասին հիմակ անօգուտ է ճտով:

Նուպարը ճանչնալը զինքը սիրել էր: Մենէ անոնք որ զինքը ճանչնալու առաւելութիւնը ունեցան, ա՛լ մէյալ իրեն պէս մարդ մը պիտի չտեսնեն: Անգլիացիները բարձր պիտի պահէն միշտ անոր յիշատակը, որովհետեւ մեռաւ, ինչպէս ապրած էր, իբր ջերմ հաւատացող մը անզլիական ցեղին քաղաքակրթիչ ուժին. ու բոլոր անոնք որոնց վրայ Եղիպտոսի անունը իր մասնաւոր հմայքը կը

գործէ, պիտի պատուեն այն պետական—մարդը որ ամէնէն աւելին ըրաւ՝ զայն ազատելու համար իր նախկին ստըրկութիւնէն:

Սրբաւարտէն.

... 1895ին պաշտօնէ հեռացաւ, ու անկից ի վեր քաշուած կ'ապրէր: Իր բարձր նկարագիրը ու մեծ կ'սրբազութիւնները իրեն վաստակուցած էին յարգանքը ամէն անոնց որոնց հետ յարաբերութիւն ունեցած էր: Կարելի է որ սարակոյսի տակ ձգուի թէ արժանի էր Եղիպտացի Գալուսըր տիտղոսին որ երբեմն իրեն կը արուէր. բայց՝ աներկբայ՝ իր ժամանակին արեւելցի պետական—մարդերուն ամէնէն կարողն էր, ու մարդ մըն էր որ անշուշտ նշանաւոր պիտի հանդիսանար ո եւ է երկրի քաղաքակաւնութեանը մէջ ուր բազմը նետած ըլլար զինքը:

Տէյլի Գրոնիքէն.

Եղիպտոսի նախկին նախարարապետը, սրտն ազդեցութիւնը ընդհանրապէս Ֆրանսայի հակառակ էր, կը նախընտրէր Բարիզ ապրիլ: Քաշուած կեանք մը կը վարէր գրեթէ, բայց յաճախ կը տեսնէիք զինքը Կրանդ Օթէլի բակը, կամ Ռիւ Սքրիպի անկիւնը՝ տիկին Տիւբէրոնի քնօշկին մէջ, ուր լրագիրներ ու հանդէսներ կը գատուէր: Շատ քիչ անգամ բարեկամներ կ'ընդունէր իր Ալլանի Թրօքատէրոյի բնակարանը, եւ բացարձակապէս կը մերժէր խօսիլ եղիպտական գործերուն մասին: Ասիւթ ու նեցայ Նուպար փաշային հանդիպելու Նիս, արկածէ մը յետոյ իր ապաքինմանը միջոցին: Իր այդ վիճակին մէջ անգամ, շատ զուրահազորոյ էր: Ըսաւ թէ իր նկարագիրը՝ Քրիստոսնէի մը նկարագիրն էր Մահմետականներու մէջտեղ, եւ թէ կէս—Անգլիացի մըն էր ինքը: Տարօրինակ կերպով աւելորդապաշտ էր, եւ ամէն օր բազմը կը փորձէր՝ արցակ մը թուլթուլ: Նուպար փաշա քմահաճ բայց վեհանձն էր, մանաւանդ իր բոլորտիքը զանուաններուն համար:

Բեյ Մեյ կապեղէն.

Նուպար փաշան «Եղիպտացի Պիլմարք»ը անուանած են: Այս կարգի բազմատեղութիւնները անշուշտ երբեք ճշգրիտ չեն, բայց՝ աներկբայ՝ Նուպար Եղիպտոսի արտադրած կամ արտադրելիք քաղաքաշէտներուն մէջէն ամէնէն աւելի Պիլմարքի մօտեցողն է: Նուպար, արդի Հայերուն ամէնէն մեծը, նմանապէս արդի Եղիպտոսի միակ մեծ պետական—մարդն էր, եւ ինք ու Միտհապ փաշա Արեւելեան Միջերկրականի մեր ժամանակին տուած երկու միակ պետական—մարդիկն են որոնց յիշատակը պիտի ապրի: Եղիպտոսի վեց իշխանի ներքեւ, և գրեթէ անհամար տափնապներու մէջէ, կէս զար ծառայեց իր որդեգրած երկրին՝ իր բոլոր կարողութեամբ. եւ այդ կարողութիւնը այնպէս էր որ Եւրոպայի ո եւ է նախարարապետ կրնար պարճենալ անով:

... Ասան մը Նուպար փաշայի մասին ազլէ բան

չկար որ չըսէին Ֆրանսայի մէջ. յետոյ, բոլորովին հա-
կառակը տեղի ունեցաւ: Պատճառը բացայայտ է. Նու-
պար, գործին ամբողջութիւնը առնելով, նպաստեց անգլ-
լիական դրամանը: Հոգուով մարմնով անգլիականը մը բը-
լալէ հետի էր, բայց կը տեսնէր թէ անգլիական վարչու-
թիւնը միակ կարելի բանն էր Եգիպտոսի համար: Պ. Մու-
պըրլէ Պէլ 1888ին գրեց իր մասին. «Նուպարի ուզածն
է Եգիպտոս մը զոր Անգլիան կառավարէ հայ ներկայա-
ցուցչի մը ձեռքով»: Ու ասիկա շիտակ է:

Իր նկարագրութիւնը ընելու համար, լաւագոյն կը
սեպենք արտագրել ինչ որ թղթակից մը Բէյ Մէլ Կագոյի
մէջ կը գրէր երբոր Նուպար հրատարեցաւ 1895ին. «Եօ-
թանասունըմէկը անցած, այսպէս կը կարծեն ինքը եւ ի-
րենները. կեանքին յոգնութիւններովը ծանրաբեռն. խո-
շոր աչքեր. աչքի զարնոզ կարմիր երակներ աջ այտին
վրայ. շատ քիչ մազ, մեծ մասամբ ալիւրած. անյարգար
ձերմակ պիտեր. ուժով ծնօտ. ֆէսը ծուռ աջ ահանջին
վրայ, եւ գլխուն համար շատ մեծ. բարձրահասակ եւ
մեծոսկր. հագուածքին անհոգ, շատ հին կէս-կապուած
կօշիկներ կը հագնէ տան մէջ. կը ծոխ, ահնոց կը գնէ՝
կարգալու համար սեւտական եւ ուրիշ թղթեր: Եթէ հետը
երկար ատեն մնաց, ամուր յարգանք մը կը զգաց իրեն
համար, թէպէտ երբեմն կրնայ ըլլալ որ արհամարհանքի
կամ ժպիտի մը փոխուի ատիկա: Ուրախ կ'ըլլաց որ քը-
րիստոնեայ մըն է ցեղով, եւ կրնայ բոլոր մարդոց դադա-
փարները ընդունիլ ազատօրէն: Աներկբայ, Արեւելքի էն
մեծ՝ նկարագիրն է ինքը, թէ՛ իմացականութեամբ, թէ՛
պարկեշտութեամբ, թէ՛ նախաձեռնութեամբ եւ թէ՛ արու-
թեամբ: ...Տանը մէջ հանգարտ ու զբաւիչ է, բայց զիւ-
րաւ կը բռնկի, ու յաճախ յամառ է: Չեզի կ'ահաբեկէ եթէ
տեսնէ որ տկար սուսերամարտիկ մըն էք իրեն դէմ, եւ
եթէ կարծէ որ զիւրաւ կ'ահաբեկիք. եթէ սակայն հասկնայ
որ ատանկ չէք, ան ատեն կը բանալարէ ձեզի հետ, ու
ձեզի կ'ըսէ ինչ որ ճշմարտութեան կերպարանք ունի,
կամ, մանաւանդ, ինչ որ ինք կ'ուզէ որ իբր ճշմարտու-
թիւն ընդունիք: Եթէ կարենաց իրեն օգտակար ըլլալ, կը
գործածէ ձեզի. եթէ չկարենայ ձեզի նետել, կը հանդուր-
ձէ ձեզի այնչափ թեթեւութեամբ որչափ կարելի է: Եգիպ-
տոսի մէջ ամէն մարդ կը վիայէ իր անկեղծ բարեկամու-
թեանը եւ վեհանձնութեանը, ընկերութեան մէջ: ... Իր
յիշատակները գրեց Մէհմէտ Ալիի ժամանակէն մինչեւ
1888, բայց կարծեմ վերջին պահուն նկատողութիւններ
զինքը մղեցին ետ առնելու հրատարակութիւնը նոյն իսկ
այն մէկ քանի մասնաւոր օրինակներուն զորոնք տպել
տալ կ'ուզէր: Կ'ըսեն թէ ահագին հարստութեան մը տէր
է. սրտանց հայրենասէր մը, այսինքն Հայուն Հայը. գո-
րովագութ հայր, լաւ ամուսին: Նուպար շատ բանի մէջ
կատարեալ է, — քաղաքականութեան հնարքներու, աղա-
պատանքի, իշխանութիւնը վարելու կերպին, իր տէրերուն
հետ համաձայնութեան, անհամաձայնութեան, արհա-
մարհանքի, յարգանքի մէջ: ... Ու երբ խօսակցութեանը
մէջ ֆրանսերէնէ անգլիերէնի ու անգլիերէնէ ֆրանսերէնի

կը վազվառէ, շահագրգռութեամբ մտիկ կ'ընէք արեւելցի
Ուլթոլին (1), որ աւելի քիչ մոլութիւններ եւ աւելի մեծ
առաքինութիւններ ունի քան որչափ սովորական է Արե-
ւելքի մէջ:»

Մորեիեկ Բոսպէն.

... Ամէն ատեն եւ ամենուրեք, Նուպարի անձնաւորու-
թիւնը աչքի զարնոզ անձնաւորութիւն մըն է: Անհասա-
կան կեանքին մէջ, հակառակ իսմայիլի արքունիքին ա-
պականութեանը, մաքուր էր, եւ անձնուէր իր կնոջը, որ,
իրեն պէս, մեծ լեզուազէտ մըն էր: Խորամանկ, թափան-
ցող, ենթրիկի համար հանձարով մը, եւ սակայն զիւրաւ
բռնկող ու յամառ, իր նկարագիրը շատ բարդ էր, բայց
կարելի չէ տարակոյսի տակ թողուլ իր ճարտարութիւնը,
իր աշխատելու կարողութիւնը, եւ ուղղամտութիւնը սրով
անձը նուիրեց ամէն ծրագրի զոր իր որդեգրած երկրին
նպաստաւոր կը նկատէր: Նուպար միշտ քրիստոնեայ
մնաց, եւ, ալ աւելի, երբեք չը մոռցաւ իր հայ ծագումը:
Այս վերջին իրողութեան ապացոյց են իր երկու խոշոր
հատորները սրոնք Բարիզ հրատարակուեցան 1868ին,
«Շար հին եւ նոր հայ պատմագիրներու»:

Տէյի Մէյլէն.

Նուպար փառայի մահուանով՝ եգիպտական բեմէն
կ'անհետանայ եզական եւ շահեկան անձնաւորութիւն մը.
Եգիպտոսի «Մեծ Ծերունին» էր ան:

... 1895 նոյեմբերին հրատարեցաւ: Իր այդ նախա-
րարապետութեան միջոցին էր որ պատահեցան Հայաս-
տանի շարժերը: Հայերուն նկատմամբ Նուպարի համակ-
րանքը՝ այդ ցեղէն շատերը մղեց Եգիպտոս ապաստանե-
լու: Ոչ ոք այնչափ պիտի ցաւի Նուպարի մահուանը որ-
քան Հայերը:

Կրպէն.

... 1895ին հրատարեցաւ, 53 տարուան հանրային
ծառայութենէ յետոյ: Իր վերջին կարճատե նախարա-
պետութեան միջոցին կատարած զործին արժէքը ամենա-
լաւ կերպով կը հասկցուի սա իրողութեամբ թէ կացու-
թիւնը այնպէս ինչպէս ձգեց ինք՝ խաղաղ ու նոյն իսկ
մնայուն է անկից ի վեր: Նուպար փառա արդի Եգիպտոսի
Մեծ Ծերունին էր: Պետական մարդ մըն էր ան որ նշա-
նաւոր պիտի հանդիսանար ո եւ է երկրի մէջ:

(1) Հոչակաւար անգլիացի քաղաքագէտ 1676-
1745:

ՀԱՅԸ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՄԷՋ

Շատ քիչ Հայ տեսած եմ մեր վերջին աղէտքներէն այնքան սրտովին ու այնքան խորապէս ազդուած որքան Նուպար փաշան: Իրացնել սրտէն արին կ'երթար ամէն անգամ որ հեռադիրը Բարիզ կը բերէր նոր կոտորածի մը կամ նոր հարստահարութիւններու գոյժը: Դեռ անոյն հետայն կ'այլազուէր, աչքերը կը լեցուէին, ու դոյզաջուն ձայնով մը.

—Օ՛, կը բաւէ, կը բաւէ, կը խնդրէր կարգացողէն կամ խօսողէն:

Ու լուծին մը կը տիրէր սենեկին մէջ:

Յաճախ դիտած եմ զինքը այսպէս լուռ, աչքերը յառաւ իր զրասեղանին դիմաց, ուր Տիկին Նուպար փաշայի մէկ բաւարէր շրջանակին մէջէն իր գեղնաշորթ ծաղիկներու թաւ ու փոշոտ փունջին զեղեցիութիւնը կը խնդար: Ինծի կը թուէր թէ մտքովը կ'երթար այն գոթազդ երկիրը որ իրն էր, ուսկից սրտովը երբեք բաժնուած չլը եւ որուն ճակատագրին բարեփոխմանը աշխատած էր ընդունայն:

Յանկարծ ոտքի կ'ելլէր, իր գաւազանին կրթնած, ու կը սկսէր խօսիլ, շարունակելով գոցցես իր ներքին խորհրդածութիւնը:

—Ահ, 78ին, 78ին: Ինչպէս կ'Պոլսոյ պատրիարքը ու իր խորհրդականները չհասկցան զիս: Պերլինի վեհաժողովին համար իմ պատրաստած ծրագրովս, մտա՛հ եմ, երջանիկ պիտի ըլլային Հայերը: Երբ Հոնիոն իշխանին ներկայացուցի զայն, կարգաւուն պէս գոչեց. «Ահա՛ արեւելեան խնդրին բանալին»: Ու լորտ Լայընս ծրագիրը անմիջապէս ձեռքէս խլեց, իր կառավարութեան ներկայացնելու եւ բոլոր հագուովը անոր ուժ տալու համար: Բայց երբ Պերլին գտնուող Հայ պատուիրակութեան զրեցի որպէս զի Ազըր ինծի պաշտօն տայ Պերլին երթալու եւ ծրագիրս անձամբ պաշտպանելու վեհաժողովին առջեւ, մերժողական պատասխան ստացայ իրենցմէ:

Առանց չափազանցութեան, կրնամ ըսել թէ այն վերջին երկու տարիներուն մէջ որ Նուպար փաշայի բարեկամութիւնը վայելելու պատիւը ունեցայ, զրեթէ տասն անգամ պատմած է ինծի իր կեանքին այս զրուազը, զրեթէ միշտ նոյն բառերով ու նոյն շեշտով, սեւեռեալ գաղափար մը ունեցող մարդու մը անդու խոսովը:

Պատմութիւնը ծանօթ է շատերու: Այն միջոցին ուր Հայ պատուիրակութիւնը Պերլինի վեհաժողովին դրանը առջեւ կը զեղերէր, ծոցը ունենալով հայկական ինքնօրինակութեան ծրագիր մը՝ որուն անիրականակի հանգամանքը վրիպած էր Ներսէս պատրիարքի եւ իր խորհրդականներուն քաղաքագիտութենէն, Նուպար փաշա, որ նոյն միջոցին Բարիզ կը գտնուէր, հայկական նահանգներուն համար շատ աւելի պարզ ու համեստ ծրագիր մը պատրաստած էր: Իր մտերիմ բարեկամին՝ գերմանական գե...

պան Հոնիոն իշխանին՝ եւ անգլիական գեապան լորտ Լայընսի նպատատուր կարծիքը առնել յետոյ իր ծրագրին մասին, Հայ պատուիրակութեան գրած էր վաստակից, պատրաստուած արդէն նոյն հետայն Պերլին ուղեւորելու, ուր վեհաժողովին անդամները, շատը զինքը գործի վրայ տեսած Եղիպտոսի միջազգային քաղաքականութեան բեմին վրայ, իր բարեկամներն ու պաշտօնակիցներն էին, եւ ամենքն ալ առանց բացառութեան մեծադոյն համարուած ունէին իր պետական մարդու առաջնակարգ կարողութիւններուն վրայ: Հայ պատուիրակութիւնը Պերլինէն անմիջապէս Պոլիս փոխանցեց Նուպարի առաջարկը, որ կտրուկ կերպով մերժեց զայն, եւ պատուիրակութիւնը այս մերժումը հաղորդեց Նուպար փաշային Բարիզ, քանզի լուր անոր կազմած երազները եւ տալով իրեն ցաւ մը որուն կսկիծը քսան տարի յետոյ տակաւին իր զգայուն սիրտը կ'արիւնէր:

Ինչ էր Նուպարի ծրագիրը: Անգլիական մեծ հանդէսը, Նայերիերթ Սեկիտարի, հրատարակեց զայն 1878 սեպտեմբերի թիւին մէջ: Հազիւ երկու էջէ կը բազկանայ այն. ո՛չ մեծ խօսքեր կան հոն, ո՛չ լայն առաջադրութիւններ, ո՛չ իսկ ինքնօրինակութեան խօսքը: Պարզ, հաճիրճ ու չոր է: Երկու խօսքով կրնամ զայն համարօտել: Նուպարի ուզածն էր հայկական նահանգներուն համար քրիստոնեայ ընդհանուր կառավարիչ մը՝ մեծ պետութեանց հաւանութեամբ անուանուած, մէկ քանի եւրոպայի գաւառուր, եւ տեղական ոստիկանութիւն, մէկ քանի եւրոպացի սպանեւրով: Այսչափ միայն:

Միայն թէ այդ ընդհանուր կառավարիչը, ինչպէս լուրեբայն կ'իմացուէր, Նուպար փաշան պիտի ըլլար. ու աւսիկ կը բաւէր:

Ոչ ոք կրնայ այսօր հաստատօրէն ըսել թէ Նուպարի ծրագիրը անպատճառ պիտի ընդունուէր Պերլինի վեհաժողովին: Բայց, անշուշտ, Պերլինի վեհաժողովին եթէ բան մը կը սպասէինք, Նուպարն էր որ զայն ձեռք պիտի կրնար բերել, եւ ո՛չ թէ Հայ պատուիրակութիւնը: Ու ինք հաստատ հաւատքը սնէր թէ իր ծրագիրը պիտի ընդունուէր, ու իր առաջադրութեան մերժման կսկիծը կը պահէր տակաւին քսան տարի հոքը:

Անգամ մը — ու անգամ մը միայն — իր երազին տարուած, ըսաւ ինծի.

—Քսան տարի: Ե՛ս գիտեմ թէ ինչ ըրած կ'ըլլայի այն երկիրը քսան տարուան մէջ:

Այսպիսի ինքնախտահարութիւն մը անշուշտ արդ. բանալի էր իր բերնին մէջ: Պ. տը Պոլովից Թայնզի մէջ կ'ըսէր թէ եթէ Նուպար Պոլսի քաղաքի ընդհանուր կառավարիչ ըլլար Պերլինի վեհաժողովին յետոյ՝ ինչպէս պահ մը մտադրուած էր, Պոլսի պատրիարքայ այսօր հասած պիտի ըլլար բարօրութեան մը գոր մարէն իսկ չկրնար անցընել: Աւսիկ ո՛րչափ աւելի ճշմարիտ է մանաւանդ Հայաստանի համար, ինկատ առնելով մեր ցեղին գիրագանց յատկութիւնները եւ ընդունակութիւնները, զորոնք ուղղելու գործը Նուպարի յանձնուած ըլլար:

Ինք երկիր մը վարած էր ու կը ճանչնար մարդիկը: Գիտէր թէ երկրի մը համար մէկ կենսական բան կայ միայն — Արդարութիւն: Եթէ իրեն միջոց տրուէր Արդարութիւնը հաստատել տալու հայկական նահանգներուն մէջ, Հայաստանը ու Հայերը փրկուած էին: Մնացեալը ինքնիրեն կուգար: Պատրիարքարանը անշուշտ չէր կրնար հասկնալ ասիկա: Շատ քիչ կը գտնէր Արդարութիւնը միայն:

Նուպարի համար՝ ամէն բան էր ան: Լծակը պիտի ըլլար ան իր ձեռքին մէջ որով պիտի վերականգնէր երկիրը ուր կ'ապրին Հայերը: Գիտէր թէ Արդարութիւնը — և անոր հետ զուգընթացաբար Ապահովութիւնը — պիտի բաւէր Հայերուն՝ Ասիոյ այդ մասին մէջ ստեղծելու համար քաղաքակիրթ երկրի մը ամէն բարեբնները:

Որովհետեւ այդ Հայը տարօրինակապէս մեծ հաւատք մը ունէր իր ցեղին վրայ: Յեղին տոկունութեանը եւ գերագոյն ընդունակութեանը հիացումովը լի էր միշտ: Կատարելապէս գիտէր Հայոց պատմութիւնը, եւ հանրացումներու համար իր սենեցած հակումովը և տաղանգովը, երկու մեծ իրողութիւն կը գտնէր մեր պատմութեան մէջ որոնք հայ ազգին պատուաբեր բաժինը կը ներկայացնեն մարդկութեան զարգացմանը ընթացքին մէջ, — առաջինը՝ դարերով ու դարերով թուաբ կանգնիլը ասիական հոսանքին առջև որ կուգար անընդհատ իր կողերը պատռտել, ու երկրորդ՝ Պաւլոսիան աղանդին ծագումը Հայոց մէջ, ուսկից աքսորեալ աղանդաւորներու հետ Եւրոպա անցանքն, Ալլախիաններուն ծնունդ տուաւ եւ ի վերջոյ առաջ բերաւ Բողոքականութիւնը, այսինքն մարդկային մտքին ազատագրութիւնը կրօնքին խեղդող կապերէն: Եթէ առաջին իրողութեան մէջ՝ մեր ցեղին տոկունութիւնը և Արեւելքի մէջ արեւմտեան գաղափարին յամառ ներկայացուցիչը մնալու արժանիքը կը տեսնէր, երկրորդին մէջ կը գտնէր մեր ցեղին ըմբոստ ու քննող ոգին արտայայտութիւնը:

— Մեր արեանը մէջն է ասիկա, կ'ըսէր: Ապստամբ սգի մը ունինք: Ես իսկ, կը յարէր ժպտելով, իշխանութեան գլուխը՝ միշտ ապստամբ մը եղած եմ:

Շատ անգամ փափաք յայտնած է որ Հայոց պատմութիւն մը դրուէր այն պատմական իմաստասիրութեամբը որ իրն էր:

— Ա՛հ, կ'ըսէր երբեմն, եթէ յոգնած ու ծերացած չըլլայի, ե՛ս կը գրէի Հայոց պատմութիւն մը, այնպէս ինչպէս կ'ըմբռնեմ սակայն:

Այդ պատմութեան մէջ պիտի չմտնար անշուշտ ի վեր հանելու Հայոց կատարած դերը Բիւզանդական Կայսրութեան մէջ: Իր սիրական նիւթերէն մին էր ատիկա, ու միշտ մասնաւոր ախորժ մը կը զգար իրարու ետեւէ համբելու տասնըմէկ կայսրերը զոր տուած ենք Բիւզանդական դահլու: Տաներորդին կանգ կ'առնէր, ու կը փնտռէր.

— Բայց, տիսպլոն, ո՞րն էր տասնըմէկերորդը: Գիտեմ որ տասնըմէկ են: Հարկ է որ գտնեմ այդ տասնըմէկերորդը. պէ՛տք է ինձի: Պէտք է որ նորէն աչքէ անցընեմ Կիպսընս:

Կը շեշտէր մանաւանդ այն ա՛լ աւելի կարեւոր դերը զոր կատարած էինք Բիւզանդական Կայսրութեան մէջ, տալով անոր զօրավարներ, զինուորներ, վարչապետներ, արուեստի ու արհեստի մարդիկ, կերպով մը ատաղձը կազմելով այն խոշոր շէնքին:

Հայաստանէն դուրս մանաւանդ հայ ցեղին կատարած դերին մեծութիւնը զինքը մղած էր մեր ճակատագրին նըկատմամբ տեսակ մը ըմբռնումի, որուն մէջ Հայաստանը ի բաց կը թողուէր:

— Հայաստան երբեք եղած չէ, կ'ըսէր, կամ՝ այնքան քիչ որ նշանակութիւն չունի: Բայց Հայ միշտ եղած է, ու միշտ պիտի ըլլայ:

* * *

98ի Կապոյտ Գրքերէն մէկուն մէջ (Թիւրքիա, Թիւ 1, ԼՂ 113), Սուլտանի մէկ հեռագիրը կայ 1897 ապրիլ 3 թուականով՝ ուղղուած Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆիլիք Գըրրիի. «Բարիզի անգլիական դեսպանատունը լուր ստացած է թէ շարք մը մտաւալուտ է Հաճըն:»

Նուպար փաշան էր որ այդ լուրը իմաց տուած էր Բարիզի անգլիական դեսպանին՝ Սըր Էտտըրտ Մոնտընի, որ փութացած էր հաղորդել զայն Լոնտոն, ուսկից նոյն հետայն լորտ Սուլտանի կ'աղարարէր Սըր Ֆիլիք Գըրրիի հարկ եղած կանխարգել զիմուքը ընել Դրան մօտ:

Կը յիշեմ՝ այն սրտատրոփ անձկութիւնը որ տրորեց ծերունի պետական-մարդուն սիրտը, երբ Հաճընի սպասնացող վտանգին լուրը իրեն հաղորդուեցաւ: Բան մը չըսաւ, այլ նոյնհետայն կատքը լծել տուաւ ու դուրս ելաւ:

Իրիկունը կ'ըսէր.

— Հարկ եղած զիմուքը ըրի այսօր: Տա՛ր Աստուած որ նոր աղէտքի մը գուժը չառնէինք:

Ի՛նչ օրեր էին անոնք, Վանի շարքը, Կ. Պոլսոյ կատարածը, ու ամբողջ եւրոպական իրարանցումը որ պահ մը միջազգային քաղաքականութեան մէջ օրուան հարցը ըրաւ հայկական հարցը: Օրէ օր սրտատրոփ կը սպասէինք միութարական լուրի մը, հորիզոնին վրայ աւետաւոր լոյսի մը: Ու ամէնէն աւելի հաւատքով սպասողներուն մէջն էր Նուպար փաշան: Իր անգլիացի բարեկամներէն մին Տէյլի Թիլէկրաֆի մէջ կը գրէ թէ օր մը ըսեք է իրեն որ հայկական ինդրին յաջողութեանը ու է է յոյս չունի: Չեմ կըրնար ըսել թէ յուսահատութեան վայրկենի մը մէջ Նուպար փաշա այդպիսի յայտարարութիւն մը ըրած չըլլայ, բայց կրնամ հաւատարմ թէ՛ յաճախ՝ յոյսի ու հաւատքի խնդրութիւնը ունեցաւ այդ օրերուն եւ հաղորդեց զայն իր շուրջը գտնուողներուն:

— Աղէկ լուրեր ստացայ այսօր, կ'ըսէր:

Ու իր գէմքը կը ճառագայթէր: Անշուշտ մեծ բաներ չէր սպասեր Հայաստանի համար, բայց պահ մը մանաւանդ հաստատօրէն կը հաւատար տեսակ մը բարեկորու գումներու իրական գործադրութեանը, որոնք սփոփանքի շունչ մը առնել պիտի սային իր դժբաղդ հայրենակիցներուն:

Յետոյ, տիրութեան ու սրտաբեկութեան օրերը եկան, ճշմարիտ յուսահատութեան օրերը, երբ ա՛լ ղիւանադիտութիւնը իր բազմաթիւ թողուց հայկական խնդիրը: Նուպար ճշմարտապէս տառապեցաւ ասիկէ: Զուր տրտունջներ չէր բառնար պետութեանց վարիչներուն չէմ. բայց անոնցմէ մէկո՛ւն՝ չէր խնայեր իր արհամարհանքը, Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Պ. Հանոթային:

— Կ'ըմբռնեմ որ, կ'ըսէր, Հանոթօ իր երկրին շահերուն նպաստաւոր չգտնէ միջամտել Հայերուն ի նպաստ: Բայց դրել Ռիպիա տը Բարիի մէջ թէ հարկ չի կայ իրար անցնելու Հայերուն համար, թէ ձմեռը կը մօտենայ և թէ ձիւնը ամէն բան պիտի թաղէ իր տակը ու պիտի մոռցնել տայ Հայերը, ասիկա անարգ սրտի մը գործն է, ու խզճի տէր ոչ մէկ մարդ կրնայ ներել իրեն ասիկա:

Ու բամահրանքի ծալք մը կը փոթթէր իր շրթունքները:

* * *

Հայերէն շատ քիչ պիտէր Նուպար փաշա, ասոր ցաւը ունէր, եւ սիրալի խղճմտութեամբ մը, երբեք չէր ուզէր դորձածել իր անբաւական հայերէնը՝ խօսելու համար: Երբեմն երբեմն սակայն, զուարթութեան վայրկեաններուն, մաքուր ու յղիւած հայերէն պարբերութիւն մը կը նետէր մէջտեղ, ու ճշմարիտ հաճոյք մըն էր իրեն համար՝ շուրջը գտնուողներուն զարմացական հաւանութիւնը:

Երբեմն կը յիշէր Չամչեանի Հայոց պատմութենէն մէկ քանի բառ, «Քաջն Խորէն եւ խոհեմ Նուպար», ու կը յարէր:

— Չամչեանին մէջ փնտոցէք, պիտի գտնէք այս բաները: Ղարաբաղի իշխաններ եղած են ասոնք: Մեր ընտանիքն ալ Ղարաբաղէն եկած է: Տարակոյս չունիմ որ, կ'աւելցնէր ժպտելով, այդ Նուպարը իմ նախնիքներէն մին եղած է. «խոհեմ» այդտեղ իմաստուն ըսել է, այսինքն քաղաքագէտ ու վարչագէտ, ու ես ընտանեկան աւանդութիւնն է որ շարունակած եմ:

* * *

Իմ այստեղ գծած շրջանակէս դուրս է այժմ խօսիլ մարդուն վրայ որ կար Նուպարի մէջ, այն տարօրինապէս բարի, ազնիւ, ու համակրող մարդուն, որ իրեն կը զրաւէր բոլոր զինքը ճանչցողները: Տէյլի Նիռազի խմբագրին պէս ես ալ կրնամ կրկնել. «Մենք անոնք որ զինքը ճանչնալու առաւելութիւնը ունեցան, ա՛լ մէյ մըն ալ իրեն պէս մարդ մը չպիտի տեսնեն»: Ուրիշ ուսումնասիրութեան մը նիւթը պիտի ըլլայ ատ ինձի համար:

Հայ Նուպարը՝ գերագանց Հայ մըն էր: Իր արժանիքը պզտիկցնել պիտի ըլլար ըստ իս, այդ կորուստին որքանութիւնը չափելու համար, յիշել այն առատաձեռնութիւնները զոր ըրած էր՝ վարժարանի մը հիմնարկութեան, զրքերու հրատարակութեան կամ թշուառներու սփոփման համար: Պէտք է ողբալ զինքը իբր մէկը որուն մահը մեծ բան մը պակսեցուց իր ցեղին հաւաքական ոյժէն, եւ աշխարհի մէջ մեր դրաւած դիր-

քին նուագում մը կրել տուաւ: Իբր Հայ, իր գոյութեամբ լոկ, մեծագոյն ծառայութիւնը մատուցած էր զոր մարդ մը կրնայ երբեք մատուցանել զինքը ծնող ընկերութեան, համայն աշխարհի տալով գերագոյն ու ղեղեցկագոյն ապացոյցը իր ցեղին բարձրագոյն ընդունակութեանց: Ասեղաւ ու աս պիտի ըլլայ միշտ իր դերը Հայ ազգին համար, և ասոր համար է որ կ'արժէ ամէնէն աւելի ողբալ իր մահը:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՍԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՎԼԵՊ)

Զ

Իր խերն էր որ կ'անիծուէր կոր, խեղճ Մարտիկ ազային:

Իսկիւտարի ընդարձակ ու պարտիզաւոր տունէն փոխադրուած յարաբերաբար պզտիկ, միայրակ աբաթըմանի մը նեղ, խեղդուկ շրջանակին մէջ, իր ծառաներուն, պաշտօնեաներուն հլու ամբոխէն զրկուած, չեխելիք, հըրամայելիք զրեթէ ոչ ոք ունենալով, ինչպէ՛ս մտիկ ընող, իր պերճախօսութեան զլիւտոր նիւթէն ըրտօրէն, բոնապետաբար խլուած, խօսքի ու գործի ազատութիւնը կաշկանդուած, լրտեսներու վախէն զուրս ելլելու, խօսելու, ճանելու փափաքները զսպուած, իր հպարտութիւնը, արժանապատուութիւնը սոսկալի կերպով վիրաւորուած կրած պարտութենէն, մերթ վհատ, մերթ զայրացիտ, վրէժի կամ հաշտութեան միջոցներ որոճալով ուղեղին մէջ, խեղճ Մարտիկ աղան վանդակի մէջ բանտարկուած գազանի վիճակը ունէր, այդ օրէն ի վեր:

Երբեմն կը փորձէր իր բարկութիւնը թափել ունեցած միակ արար ծառային վրայ, որ Իսկիւտարի սպասախուժին տեղը կը բռնէր հիմա. բայց լեզուն չէր զիտեր, ատանալիտան արաբերէնը. լա՛, այվա՛, առազ, մըշ առազ, ետղալ բռնէն գատ ուրիշ բառ չէր զիտեր Մարտիկ աղա. կ'ուզէր չախել, հրամայել, վճատել. բայց եկուր տէ՛ մէջէն ելիր... Թուրքերէն, հայերէն, նոյն իսկ գաղիերէն բառերու հեղեղի մը մէջ կը կորսուէին գիտցած արաբերէն մէկ քանի բառերը: Արաբը բնականաբար բան մը չէր հասկնար օտար բառերով կարկառու արաբերէնի ծուլէններուն ձեռքըմամբ, փեթտումէս. կը ծիծաղէր լուռ մը ու զայրացած Մարտիկ աղայէն Եալլա բուհ մը առնելով կը հեռանար:

Հայ սպասաւոր ինչո՞ւ չէր աններ, պիտի ըսէք: Հայա յեղափոխական ըլլար նէ: Աս շունչանորդիները վրանին նշան չունին ես՝ Մարտիկ աղան հիմա յեղափոխականներէն կապոյտ վախ մը ունէր, թէ եւ չէր ուզեր խոս-

տալանիկ առիկա ինքզինքին ու կը շարունակէր իր սպառնալից «անոնց խերը պիտի անիծեմ»ները պողոտայ։

Սիւնոն գաղափարի մը յամառութեամբ Սուրեանին հետ ունեցած խօսակցութիւնը կը վերապահուար իր մտքին որ դեռ այդքան խորունկ տպաւորութիւն կրած չէր։ Սուրեանին հանդարտ, ինքզինքին այնքան տէր ու ուրիշներն ալ անիրապետող դիրքը, շուրջ, հանդիսաւոր երեւոյթը, առարկութիւն չվերցնող վճռական շեշտը, խօսուածքին պաշտօնական կանոնաւորութիւնը, կշռուածութիւնը որ իր բուն, կոշտ, անկապակից խօսուածքին հետ կը համաձայնէր ինչպէս եւրոպական քաղքի մը անկիւնաւոր շիտակութիւնը, խնամուած կարգաւորութիւնը, համեմատականութիւնը՝ արեւելեան քաղքի մը ճամբաներուն խորտուբորտ քմահաճոյքներուն, անակնկալներուն, յեղակարծ էջքերուն, ելքերուն, շեղումներուն, — մանաւանդ այն օրը ըսած խօսքերը որոնց Տէրրօրը ահապիւն կշիռ մը, զաւի, զաշոյնի, ուսմբի սպանալից հեղինակութիւն մը, ահաբեկող պատկառանք մը կուտար, բոլոր ասոնք մեծ տպաւորութիւն մը զրոշմած էին Մարտիկ աղային թելադրելի ուղեղին վրայ։

Երկու տպաւորութիւններ, իրարմէ անջատ, որոշ կը զատուէին իրեն համար այդ օրուան խօսակցութենէն։ Առաջինը, սարսափի, ահախառն յարգանքի զգացում մը՝ դէպի յեղափոխութիւնը որ ալ Տէրրօր էր իրեն համար, եւ զինքը յարազրդիտ, մերթ կատղած, մերթ ջախջախուած վիճակի մը մէջ կը պահէր, ու իր գիշերները արինուս մզձաւանջներով կը դալարէր։ Երկրորդը, բոլորովին քաջալերող, ժպտուն իրեն համար, Սուրեանին վերջին նենգամիտ խօսքերուն ուղղակի արդիւնք, իր միտքը կը զբաղեցնէր առաջինէն աւելի։ Այդ վերջին խօսքերուն թաքուն ակնարկութիւնները, թելադրումները, ան տեսակ մը խորամանկ հրաւերը յեղափոխութեան յարելու, փայլեցուցած խոստումը, կարելիութիւնը ազգին մատուցած ծառայութեանը փոխարէն՝ ազգային բարերար կոչուելու, — ահիկա Մարտիկ աղային եսին կը խօսէր ուղղակի, իր փառասիրական ձգտումները, քաղաքական մարդու յաւակնութիւնները կը զգուէր, ապագայ վայելքներու յոյսով կը հրապուրէր, իր վիրաւորուած, ոտնակոխուած արժանապատուութիւնը կը սփոփէր քիչ մը, միեւնոյն ատեն որ կ'ենթադրէր իր վախին համար զրական ապահովութիւն մը՝ Տէրրօրին հարուածներուն դէմ։ Յեղափոխականներէն վախցած ըլլալով, տրամադիր կը զգար ինքզինքը անոնց մօտենալու, անոնց թշնամութիւնը հեռացնելու, օտարացնելու համար իրմէ. մանաւանդ որ այդ հաշտարար մերձեցումը իր բնածին հակումներուն՝ բարեկամօրէն ժպտող հեռանկարներ կը պարզէր։ Բոլոր ասոնք սակայն շփոթ, սաղմոսային, բզզացող ուղեղին մէջ Մարտիկ աղային որ կ'ամպնար, չէր ուզեր խոստովանիլ, — ընդունիլ թէ վախ կը զգար յեղափոխականներէն ու միանգամայն կամէութիւն մը մօտենալու անոնց — յեղակարծ գայողթներով, բուն պայթումներով ընդհատուած, կատղած արժանապատուութեան հպարտ վերականգնումներովը, արհամար-

հոտ կամ սպաննական կոչերովը տարազնուած վանուած.

— Ես անոնց հետ ըլլամ մի... Մարտիկը անոնց հետ... երբե՛ք... ես անոնց ամէնուն ալ խերը կ'անիծեմ... ամէնուն ալ...

Աս «խերը կ'անիծեմ» բացատրութիւնը Տէրրօրը կը ցցէր յանկարծ իր աչքերուն առջեւ. այդ խրտուելակը հեռացնելու համար, Սուրեանի քաջալերական խօսքերուն կը դիմէր, քիչ մը կը կախուղնար, հպարտութիւնը անձնատուր կ'ըլլար, կարծես նախաախնքի մը կը հաւանէր, ապագայ աւելի մեծ վայելքի մը յոյսէն հրապուրուած.

— Անանկ է ես... փոխանակ դէմ խօսելու ու զխօսու փորձանքներ բերելու, եկո՛ւր ի նպաստ խօսիմ... ու... ի՞նչ կ'ըլլայ... կարելի է մարդը իրաւունք ունի... ազգային բարերար...

Իրիկուն մը Մարտիկ աղա, միս մինակը նստած Քաֆէ տիւ Լուվի պարակզը, Ճերիտէի Եարգիի թիւ մը կը կարդար. չմոռնանք ըսելու որ Պոլսոյ հայ ամէն թերթերուն բաժանորդ էր։ Եթէ լրագիրներն ալ չըլլային։

Բարեւ մը, անցողակի նետուած, զինքը խլեց ընթերցումի թմրութենէն։

— Բար'իրիկուն, Մարտիկ էֆէնտի...

Գլուխը վեր առաւ։

Սուրեանն էր որ զխարկը կը հանէր հեգնական ժպտով մը, ու կ'անցնէր։

— Պարոն Սուրեան, պարոն Սուրեան, ձայնեց Մարտիկ աղա։

Սուրեան ետ գարձաւ։

— Բա՛ն մը կը փափաքիք արգիօք, Մարտիկ էֆէնտի։ Աս վերջինը, ինքն ալ քիչ մը զարմացած իր անդիտակից շարժումէն, շուտեցաւ այս հարցումին.

— Չէ, սանկ քիչ մը նստեցէ՛ք... տեսնուինք... եթէ զործ չունիք...

— Մեծ հաճոյքով։

Նեղուած, նուաստացած երեւոյթ մը առաւ Մարտիկ աղա. ինքն ալ լաւ չէր զիտեր թէ ինչու կ'անչած էր Սուրեանը։

— Ի՞նչ լուր, հարցուց յանկարծ, սկսելու համար։

— Ի՞նչ բանի վրայ, Մարտիկ էֆէնտի...

— Քաղաքականութեան վրայ, մեր խնդրին վրայ... Հայկական խնդրին մասին ի՞նչ կարծիք ունիք...

— Հայկական խնդրը լաւ ճամբու մէջ է, Մարտիկ էֆէնտի՛, միշտ կը յառաջդիմէ ան, ու օր մը պիտի ունենայ իր յաջող լուծումը։

— Արդեօք Ռուսը, Անդլիայցին ե՞ն. պիտի օգնե՞ն մեզի։ Սուրեան քմծիծաղ մը ունեցաւ.

— Ատ տեսակ յիմարական յոյսերը պէտք է զուր եւ ձեզի պէսները հանէք ձեր գլխէն. Հայկական խնդրը յաջողութեամբ պիտի պտակուի միմիայն յեղափոխականներուն քաջութեան, յանդիմութեան, ինքեքն շնորհիւ, և ոչ թէ այս կամ այն ինչ պետութեան օգնութեան շնորհիւ։ Հոգ չէ թէ ժողովուրդը բամբասէ, զրպարտէ, անամօթա-

բար նախատէ այլ հերոսները որոնք իր փրկութեանը համար ամէն բան զոհած են, կեանք, ինչք, սէր, հանգստութիւն:

Հոս լուծիւն մը. ակնարկութիւնը հասկցաւ Մարտիկ աղա, որ, բիշ մը ամօթահար հակառակ իր կամքին, քաջութիւն չէր զգար առարկելու՝ համազման այլքան ամուր շեշտով արտասանուած խօսքերուն պէս:

Մաշափ միայն կրցաւ ըսել.

—Շատ աղէկ, բայց... այսքան մեաները, ջարդերը, կողոպուտները... ազգին մեղք չէ... ուրիշ կերպ չէին կրնար ընել... մինչեւ հիմա ինչ օգուտ ըրին ազգին յեղափոխականները...

—Ատոնք, ընդմիջեց Սուրեան, գլանիկին ծուխը արծաղելով գանգաղօրէն, հարկաւոր էին, անհրաժեշտ էին, այդ ջարդերը, կողոպուտները:

Աս խօսքին Մարտիկ աղա բորբոքեցաւ:

—Հարկաւոր, ինչպէս հարկաւոր... ինչ ըսել է...

—Այո՛, բացարձակապէս հարկաւոր. չէ՞ք իմացած, Մարտիկ էֆէնտի, որ յաճախ հարկ կ'ըլլայ անդամ մը կտրել նետով, ամբողջ մարմինը ապականուէ, նոյն իսկ մահէն ազատելու համար:

—Այո՛...

—Լաւ ուրեմն, նոյն բանը նաեւ Հայ ազգին համար. որպէս զի ամբողջ Հայութիւնը դիակ մը չգտնուար, հարկ էր անոր հիւանդ, փտտած մասերը կտրել նետով. ինչ որ եղաւ: Հասկցա՞ք հիմա:

—Հա՛, ըրաւ Մարտիկ աղա, զոր այդ նմանութիւնը համոզած էր կարծես:

Պահ մը մտածկոտ մնալէ վերջ՝ մէկէն ի մէկ անկեղծ զեղում մը ունեցաւ.

—Ինձի նայէ, միտիւ, — շիպ շիտակ ըսեմ բեզի, ես մինչեւ այսօր իրաւ է թէ յեղափոխականներուն հակառակ խօսած, վարուած եմ, բայց կը խոստովանիմ որ անոնց վրայ շատ բան չիցած. ինչ որ կ'ըսուի, կը պատմուի նէ ան պիտեմ. մտէն յարաբերութիւն ունեցած չեմ ո՛ր եւ է յեղափոխականի հետ... եկուր բիշ մը ինձի յեղափոխութեան վրայ, վերջին գեղքերուն վրայ խօսէ... դուն խելացի մէկը կ'երեւաս կոր ինձի...:

Անշուշտ ժպիտ մը շարժեց Սուրեանին զիմաղծիբը:

—Յօժարաւ, մեր պարտքն է բրօքականութիւնը, մտզովրդին աչքը բանալ, զայն կրթել, լուսաւորել, յեղափոխութեան ճամբուն վրայ դնել զայն:

Սուրեան կոթնեցաւ աթոռին յենարանին, ձախ ձեռքին մատերը բաճկոնին անութիւն մէջ անցուց, իրանը թեթեւակի ուռեցուց, ոտքերը խաչաձեւեց, ու պահ մը ինքզինքը ժողովտելէն, ծուխի շնչառք մը ծուլօրէն արձակելէն ետքը, սկսաւ, հրապարակախօսի դիրքով ու շեշտով.

—Յեղափոխութիւնը, Մարտիկ էֆէնտի, այսինքն ինչ որ րեվօլյուսիօն կ'անուանեն, ժողովուրդներու ընկերական կեանքին մէկ շատ բուն ու յատկանշական դրուագըն է, որ գերազոյն ժամերուն երեսան կուգայ, կը ցնցէ ամբողջ ազգ մը, անոր ամէն խաւերը մէկ շունչով կը

միացնէ, ու զայն՝ զիմաղծութեան ու ազատագրումի հրօր ճիկի մը մէջ՝ կը ցցէ հասարակաց թշնամոյն դէմ...

Մեծ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր Մարտիկ աղա այս խօսքերը որոնց բառերը միայն կը լսէր — իրենց անհասկնալիութեամբ արդէն իր ուղեղը ապաւարտ:

—Բայց, ըսաւ Սուրեան, մեր Յեղափոխութեան վրայ խօսելէ առաջ, նախ յեղափոխականներուն վրայ խօսիմ ձեզի... Իսկապէս, Մարտիկ էֆէնտի, պէտք է ընտրուութիւն մը հաստատել, անջատում մը դնել մեր յեղափոխականներուն մէջ. պիտէ թէ երկու կուսակցութիւններ կան մեր մէջ, Դրօշակեան ու Հնչակեան:

—Այո՛...

—Լա՛ւ, կը հաւատստեմ ձեզ թէ ասոնցմէ երկրորդը, այսինքն Հնչակեան կուսակցութիւնը, արժանի է ձեր ատելութեան, ձեր զայրոյթին, ձեր արհամարհանքին: Աս կուսակցութիւնն է զլուսար պատասխանատուն այն անուի ազգաներուն որոնք մեր Ազգը ծայրատեցին, թշուառացուցին: Աս կուսակցութեան դէմ կրնաք ուղղաճիւղ հայհոյել, կապել. իրաւունք սնիք, կատարեալ ազատութիւն ձեզի:

—Ինչ, ըսաւ ուրախութեամբ պրսեցի վաճառականը որ կը տեսնար թէ բոլորովին արգելուած չէ եղեր իրեն յեղափոխութեան դէմ զայրաբանել. ու առիթը ձեռքէ փախցնել չուզելով,

—Ինչ, ըսաւ, այդ Հնչակեան ըսուած խաբերաններն են որ Ազգը այս վիճակին հասցուցին:

—Այո՛, Մարտիկ էֆէնտի, անոնց ուսերուն վրայ է որ կը ծանրանայ պատասխանատուութիւնը հայ ազգին վրայ խուժած ազգաներուն:

—Բայց, բողոքեց Մարտիկ աղա... անոնք Պապ-Ալիի ցոյցը ըրին մինակ որ մեծ մեծ մը շտուաւ ազգին... մինչդեռ Դրօշակեանները ըրին Պանքային ցոյցը... որ այնքան ջարդերու զուր բացաւ...

—Պանքային ցոյցին պատճառ տուողները նոյն ինքն Հնչակեաններն են:

—Ինչպէս...

—Հապա՛... եթէ Հնչակեանները Պապ-Ալիին ցոյցը ըրած չըլլային, մենք ալ Պանքայինը չէինք ընել... մեզի համար անպատուութիւն պիտի ըլլար ցոյց մը չընել... Հասկցա՞ք հիմա:

—Հա՛, ըրաւ Մարտիկ աղա, մտածկոտ, կարծես ջանալով ըմբռնել այդ երկու ցոյցերը իրար կցող պատճառական հարկաւորութիւնը, տրամաբանական կապը:

Սուրեան շարունակեց խօսիլ Հնչակեաններուն վրայ, ցեխի մէջ քաշելով զանոնք, մեր ազգաներուն պատասխանատուութիւնը անոնց կ'անակը բեռնցնելով...: Մարտիկ աղա բիշ բիշ ինքզինքը կը գտնար, իր առջի համարձակութիւնը կը վերստանար, կ'ընկերակցէր անոր խօսքերուն, կը շեշտէր գանոնք, իր խոշոր բառերը ու խոշոր շեշտերը մէջտեղ կը հանէր նորէն, ուրախ որ առիթը ինքնին կը ներկայանար:

Սուրեան տեղեկութիւններ կուտար, դէպքեր կը պատմէր, ճշգրիտ, մասնաւոր:

— Վա՛յ խաբբաներ, վա՛յ ոճրագործներ վա՛յ... արդէն իմ առեւտրութիւնս, շիտակը կ'ուզէք նէ, աւելի անոնց դէմ էր...

Գալսով Դրօշակեաններուն, օ՛հ, ասոնք բոլորովին տարբեր մարդեր են: Մեծ մասամբ զարգացած, համալսարանականներ, Ռուսահայեր, Ժընևի, Գերմանիա ու սուսմ առած երիտասարդներ: Ազգին համար զոհուողներ, ու անման հերոսներ: Մահեր կը պատմէր, զիցաղնական զիմարութիւններ, վսեմ անձնագոհուողներ, հրաշալի յաղթութիւններ: — Ասա՛նկ մարդեր են Դաշնակցականները:

— Ի՛նչ կ'ըսես...

Բերանը բաց, Մարտիկ աղա մտիկ կ'ընէր իրեն համար բոլորովին նոր այս խօսքերը, որոնք իր ուզեղին վերայ կը կոխուէին, կը տպաւորուէին ինչպէս ոտքի հեռքեր կակուզ ձիւնին վրայ:

Բայց Դրօշակեաններուն ըրածը բան մը չէ ընելիքներուն քով: Ազգին փրկութիւնը անոնցմէ է, այո՛: Դաշնակցական կուսակցութիւնը ահեղ կազմակերպութիւն մըն է, Հայաստանի ամէն կողմերը ճիւղաւորուած, տարածուած, գաղտնի գործող:

— Այսօրուան օրս, յայտարարեց Սուրբան, 20,000 Դաշնակցական զինուորներ ցրուած են Հայաստանի ամէն կէտերը պէտք եղած ուղղամիտներով, զէնք, վառոց, թնդանօթ իսկ. կատարեալ զօրագուններ, մարզուած, զինուած, կարգապահ:

— Ի՛նչ կ'ըսէք, թնդանօթ մի, ըսաւ Մարտիկ աղա, աչքերը խոշոր բացած, քիչ քիչ խանդավառուելով... քսան հազար զինուոր...:

— Օրէ օր շատնալու վրայ. մէկ նշանի կը նային միանալու ու ամբողջ Թիւրքիան տակնուվրայ ընելու համար... յարմար առիթին կը սպասեն...

— Ի՛նչ կ'ըսես... ըսել է...

— Քիչ ատենէն թերեւ, ըսաւ Սուրբան խորհրդաւոր մը զլուրը երեքցնելով:

Հապա՛ Դաշնակցական կուսակցութեան ծրագիրը: Եթէ, ինչ որ անխուսափելի է, ազատութիւն տրուի Հայոց, այդ ծրագիրը՝ գործադրուելով՝ Հայերուն պիտի ապահովէ աշխարհիս բոլոր կառավարական զրուծիւններուն մէջ մէկ հատիկ, անման ընկերական զիրք մը, բոլորովին ռամկավարական, ընկերվարական, Մարքսի, Լասալի վարդապետութիւններուն վրայ հիմնուած, ձեւուած: Հիանալի ծրագիր մը որ մէկէն ի մէկ ստրուկ Հայը պիտի հըրաշափի ընէ Էն ազատ քաղաքացին տիեզերքին: Մինչեւ այդ կէտերը իսկ խորհած է Դաշնակցական կուսակցութիւնը, այնքան հեռատես է ու կանխահոգ:

— Ընկերվարականը ի՛նչ է իրօք:

— Բա՛ն, շուարեցաւ Սուրբան, ընկերվարական, այսինքն... հասարակական... սօսիալիտը կ'ըսեն գաղիերէն, հասկցա՞ք:

— Այո՛, ըսաւ Մարտիկ աղա, վարանոտ:

Բայց... Դրօշակեան կուսակցութիւնը, հակառակ իր

հզօր, ահեղ կազմակերպութեան, իր տրամադրած վիթխարի միջոցներուն, պէտք ունի բարի կամեցողութեամբ զինուած ամէն ճշմարիտ Հայու օգնութեանը, նպաստին, ինչ որ ըլլայ այդ օգնութիւնը: Ամէն հայ իր կարողութեան սահմանին մէջ, իր ընկերական զիրքին ներածին չափով, իր յատկութիւններուն, ձիրքերուն համեմատ, պէտք է աշխատի Ազատութեան սրբազան գործին յառաջխաղացումին, յաջողութեանը: Պարտի յարիչ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, միակ ճշմարտապէս հայրենասեր կուսակցութիւնը: Ան որ խելք ունի, պարտի իր միտքը, ան որ զրամ ունի պարտի իր քսակը, ան որ ուս ունի պարտի իր բազուկը ի սպաս զնել այդ կուսակցութեան:

Սուրբանին ձայնը կը բարձրանար տակաւ, կը ձգեր իր կշռուած հանդարտութիւնը, ճարտասանական լայնութեամբ կ'ուռնար, սպանալից շեշտերով կը խոժոռէր:

— Վա՛տ ու մատնիչ է ան որ այս երեքէն մէկը ունի ու անգործ կը մնայ. Հայ անուան անարժան է ան որ թեւերը կը ծալէ ու կը սպասէ որ տանձը բերանը կնայ, ու յեղափոխականները կը զրպարտէ... վա՛յ անոնց որ բան մը չեն ըներ. վա՛յ անոր որ զրամ ունէր ու զլացաւ, վա՛յ անոր որ խելք ունէր ու ամալացուց զայն, վա՛յ անոր որ բազուկ ունէր ու զայն Յեղափոխութեան չնուիրեց: Այդպիսիները շարաշար պիտի պատժուին. այդպիսիները պիտի դատուին, անկախութեան հաստատումին մէջ, յեղափոխական ասեաններու առջեւ: Անոնք որ ստակ ունէին, ու զայն արկղներու մէջ ամլացուցին, անոնց բոլոր ինչքերը յարքունիս պիտի զրաւուին, յարքունիս. ու իրենք ալ բանտ պիտի դրուին, բա՛նտ:

Դող մըն է ինչաւ Մարտիկ աղային սիրան ի վար: Արդեօք ասիկա իրեն ուզուած սպանալիք մը, ապագայի ազգարարութիւն մըն էր... Չէ՞ մի որ ինք ալ հարուստ էր ու Դաշնակցական կուսակցութեան ստակ տուած չէր:

— Իւրաքանչիւր ոք պէտք է աշխատի արդիւնքի մը համար որ ամէնունը պիտի ըլլայ, վերջացուց Սուրբան:

— Է՛, հարցուց Մարտիկ աղա քիչ մը երկչոտ, իրենց հարստութիւնը ազգին փրկութեանը յատկացնողներուն ի՛նչ պիտի ընեն...

— Ի՛նչ պիտի ընեն, կրկնեց Սուրբան. Ազգին բարերարները պիտի հոշակուին անոնք: Ազգին յաւիտենական երախտագիտութեանը պիտի արժանանան անոնք. նորակազմ Հայաստանի մէջ անոնց պատիւներ, աստիճաններ, շքանշաններ, բարձր պաշտօններ պիտի յանձնուին. իրենց արձանները հասարակաց տեղերը պիտի զարդարեն. իրենց անունը ոսկեղէն անջինջ տառերով Հայոց պատմութեան մէջ պիտի քանդակուի, ու պիտի երժայ զարուց ի զարս, սերունդէ սերունդ, անշէջ մըմունջ մը արթնցնել հիացումի ու երախտապիտութեան:

Այս «թուումն մասանց»-ն շլացած՝ Մարտիկ աղա Սուրբանին կը նայէր: Դէմքը կը պայծառանար, կը խորտաւանար: Աս ի՛նչ շքեղ բաներ... իրեն համար ի՛նչ զիրին բանի մը փոխարէն...

— Իրա՛ւ...

— Հապա՛... Այժմէն արձանագրուած են անունները թէ՛ անոնց որոնք յեղափոխութեան նպաստեցին իրենց հարստութեամբ եւ թէ՛ անոնց որոնք բան մը չտուին։ Գերազոյն արդարութեան օրը հասնելուն, պատիժները ու վարձատրութիւնները պիտի բաշխուին անաչառօրէն։

— Է՛ հապա... Ազատութիւնը չհասած մեռնին նէ...

— Ազատութիւնը անոնց մահէն առաջ կը հասնի, վստահ եղէ՛ք ատոր...

— Ի՛նչ կ'ըսես... յո՛յս մը կայ... Հարցուց Մարտիկ աղա, վերջին դէպքերէն ետքը՝ քաղաքական կամ յեղափոխական գաղտնիքներուն քիչ շատ տեղեակ համբաւուած մէկու մը տեղեկութիւն հարցնողներուն միամիտ շեշտովը։

— Ատ մասին չեմ կրնար բան մը ըսել, պաշտօնական գաղտնապահութիւնը կ'արգելէ ինձի խօսիլ, ըսաւ Սուրբան խորհրդաւոր շեշտով մը օր հրաշալի ենթադրութիւններու գուռ բացաւ Մարտիկ աղային մտքին։

— Յոյց մը պիտի ըլլա՛յ արդեօք։

— Կարելի է...

— Է՛ նորէն շարժ ըլլա՞յ նէ։

— Թո՛ղ ըլլա՛յ, էփէնտիմ, թող ըլլա՛յ. շարժուին նէ ի՛նչ կ'ըլլայ եղեր...

Ըսելիք չկար ատոր։ Մարտիկ աղա լոց, համոզուած։

— Անանկ է եա՛, խորհեցաւ ինքնիրեն, շարժուին նէ ի՛նչ կ'ըլլայ եղեր։

— Հասկցաք հիմա անշուշտ թէ ի՛նչ է Յեղափոխութիւնը, եզրակացուց Սուրբան։

Լուրթիւն մը. Մարտիկ աղա իր լսածներուն կը խորհէր, բոլորովին տպաւորուած։

— Ներեցէք, ըսաւ Սուրբան՝ սրածայր ձորուքը Մարտիկ աղային դարձնելով, զուք Դրօշակ կը կարգա՞ք... երբեք կարդացած էք։

— Չէ, ստիպուեցաւ խոստովանիլ միւսը, գրեթէ ամօթահար։

— Ի՛նչ, Դրօշակ չէք կարդացած երբեք ու կը յանդիմանիք դատել Դաշնակցութիւնը, դայն նախատել։ Ատ ի՛նչ անտրամաբանութիւն։ ...Չեմ դարմանար ուրեմն ձեր տգիտութեանը, մեր կուսակցութեան մասին ունեցած սխալ, անհեթեթ գաղափարներն ու վրայ։ Դրօշակ կարդացէք, ու պիտի տեսնաք ի՛նչ գեղեցիկ յօդուածներ, հայրենասիրական վեհ շունչով, սուրբ խանդավառումով ու ուժով. պիտի տեսնաք մեր կուսակցութեան, մեր անդամներուն կատարած զիւցազնական գործերը, ու պիտի սքանչանաք։ Եկէ՛ք ինձի հետ, ձեզի յանձնեմ Դրօշակի հաւաքածուն, սկիզբէն մինչեւ այժմ, եւ ուրիշ յեղափոխական գրքեր. մեծապէս օգտակար կրնան ըլլալ անոնք ձեր յեղափոխական գաստիարակութեան համար։

(Շարունակելի)

ՊԱՐՈՅԻ

ՀԱՅԲԵՆԱՍՏԻՐ ՄԷ

ՊՈՍԴՈՆ, 99 յունուար.

Մարմնոյ ե հոգւոյ բովանդակ ուժերով ամբողջ կեանք մը դադարի մը, նպատակի մը համար ճգնելէ վերջ՝ ճշդիւ փափաքներուն իրականացման պահուն սրբան դան է մահուան անողոք վճիռը. աս չէ՞ սակայն սակայ մեծ դատի մը, սկզբունքի մը համար աշխատողներու բազմը։ Անցեալ գեղտնիքներին Ուոլինկթընի մէջ մեռաւ Քուպացի հռչակաւոր հայրենասէր զօրավար Կարսիան, որուն ծրարացած աչքերը իր սիրած կղզիին ազատութեան արշալոյսը նշմարած, իր կեանքին արեւը մարը մտաւ։ Սակայն ի՛նչ է մահը. չէ՞ որ իրենց կեանքը ազնիւ գաղափարի մը հետ նոյնացնող մարդիկ իրենց հոգւով կ'անմահանան նոյն գաղափարին հետ։

Քուպայի անկախութեան ստեղծողներէն մին էր զօրավար Կարսիա. ինքը հարուստ ծնողքի զաւակ, ընդարձակ կարուածներու տէր, դրամին շնորհած ամէն հաճոյքները վայելելու կարող, սակայն իր նիւթական եւ ընկերական գիրքէն շատ աւելի ուշագիտ իր հայրենակիցներուն թշուառ վիճակին, դեռ կանուխ հասակէն զինուոր գրուեցաւ ազատութեան, անոր տաժանելի ճամբէն երթալու անխախտ երդումով։ Կարսիայի ստացած բարձր կրթութիւնը ալ աւելի զօրացուց իր այդ կամքը. — մտքի մշակութիւնը մեծ հոգիներու վրայ նոյն ազդեցութիւնը ունի ինչ որ մեքենան բնութեան անսանձ ուժերուն վրայ. բարոյական ուժէ զուրկ մարդոցմէ կրթութիւնը շատ աննշան արգիւնք կրնայ առաջ բերել։ Մեքենան ինքնին չը կրնար շարժիլ, գոյութիւն ունեցող շարժման ուղղութիւն կուտայ միայն։ Քուպացի հայրենասէրը շատ լաւ ուսած էր ժամանակակից եւ հին ազգերու պատմութիւնները, ծանօթ էր երկու երեք լեզուներու ընդհանուր դրականութեանց, բայց անոնցմէ աւելի նոյն իսկ իր գիտողութեամբ սերտած էր իր հայրենիքին իրական վիճակը, անոր քաղաքական դրութիւնը, եւ այս ամէնուն իբր բնական հետեւութիւն այն համոզման եկած էր թէ իր հայրենիքին փրկութեան միակ պայմանը սպանիական լուծին չախախտմն էր։ Իր երիտասարդական կորովը եւ հայրենասէրի կրակը այդ տրամաբանական համոզումը կիրքի մը փոխեցին։ Իր հայրենիքին բռնակալներուն դէմ զէնք վերցուցած օրէն ի վեր, Քուպայի անկախութեան համար կոռուլը, ճգնիլը՝ շնչելու չափ բնական պէտք մը դարձաւ իրեն համար մինչեւ իր կեանքին վերջին րոպէն։

Ահա այս մարդը եւ իրեն նմաններ էին որ սկսան Քուպայի տասը տարուան ապստամբութիւնը 1878ին։ Այդ երկար տարիներու միջոցին տեղի ունեցան շարք մը արիւնոտ կռիւներ. շատերուն մէջ էր Կարսիան. յեղափոխութեան յարափոփոխ բազմէն չէր ազդուեր ան, յաղթութեան ատեն խոհեմ ու հեռատես, պարաւութեան ժա

մանակ անվհասա եւ կատաղի։ Այդ միջոցին էր որ ցոյց տուաւ իր առաջնորդի բնածին յատկութիւնները։ Սակայն այն ժամանակ զեռ տհաս էր յեղափոխութիւնը, ժողովուրդը զեռ հոգեով չէր փարեր ապստամբութեան, Սպանիացիները, բարեկարգութեան ծրագրով, կէս-սրտով միայն կուսող ապստամբներ կրնային համոզել որ զէնքերնին վար զնեն. մէկ քանի առաջնորդներու յամառ քաջութիւնը ժողովրդին անպատրաստութեան եւ սրիչ աննպաստ պայմաններու դէմ շատ աննշան ուժ մըն էր։ Կարսիան աւսնոցմէ էր որ մինչեւ իրենց վերջին շունչը կուսեցան, եւ թերեւս այդ անդրանիկ ապստամբութեան ափ մը հերոսներու հոգիներն էին որ ուրուականներ դարձած 93ի յեղափոխութիւնը ծնան։ 400էն աւելի Սպանիացիներ օր մը պաշարեցին Կարսիայի խուճըր որ 20 հոգիի հասած էր նուազելով։ Քուպացիները որոշեցին իրենց կեանքը սուղ ծախել, կատաղաբար կուսեցան, բայց Կարսիա տեսաւ թէ ողջ գերի պիտի բռնուի. լսած էր իր ընկերներուն կրած շարչարանքները սպանիական բանտերուն մէջ, ատրճանակը դունչին տակ դրաւ եւ կրակեց, յաջորդ վայրկեանին անշունչ գետին փռուած էր։ Կոսի գաշտէն տարին իր դիակը թաղելու երբ տեսան թէ մեռած չէ. դնտակը ճակատին մէջ տեղէն դուրս ելած էր։ Գրեթէ հըրաշքով ապրեցաւ. բաղդը կ'ուզէր զինուոր մը աւելի ունենալ Սպանիոյ դէմ ապագային։ Պատերազմի գերին ճակտին վրայ ունենալով իր փառքի անշնչելի նշանը Սպանիա տարին, բայց երկար չմնաց բանաւ. 78ին խաղաղութիւն հաստատուելով բանտարկեալները ազատուցան։ Կարսիա Քուպա դառնալէն տարի մը շանցած ուրիշ ապստամբութիւն մը կազմակերպած էր, որ սակայն շատ կարճ կեանք ունեցաւ, Քուպացիները յաղթուեցան, կորուսին մէկ քանի մեծ հայրենասէրներ, Կարսիան գերի բռնուեցաւ եւ կրկին Սպանիա տարուեցաւ։

Մատրիտի մէջ Կարսիայի քաջութեան համբարը եւ իր կրթութիւնը բարեկամներ ստեղծեցին նոյն խակ իր թշնամիներէն. բանտին մէջ առողջութիւնը խանգարուած էր. ոստիկանական խիստ հսկողութեան տակ թոյլ տուին որ քաղաքը մնայ։ Վտանգաւոր է սակայն առիժը վանդակէն դուրս պահել։ 1895ին գիշեր մը իր որդւոյն հետ ծերունի աքսորեալը փախուստ տուաւ, յաջողեցաւ անցնիլ Ֆրանսական սահմանազուխը եւ անկից Միացեալ-Նահանգները շուրջ Քուպացիները սպանիացիներուն խոստումներուն արժէքը փորձով չափած, բռնութենէ ձանձրացած յուսահատ կատաղութեամբ կուսելու զիտուժով յեղափոխական զրօշը կրկին բարձրացուցեր էին. ծերունի զօրնպետը հոգեով կ'անձկար այդ հին զրօշին տակ անգամ մըն ալ կուսելու որ սիրելի հայրենիքին թշնամիներուն դէմ։ Այն ատենները Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը ամէն կարելի խոչընդոտներ կը գնէր Քուպացի ապստամբներուն օգնութիւն հասցնելու փորձը Ընդունելու դէմ, ամերիկեան մարտանաւերը մէկ քանի նաւեր բռնեցին. Կարսիա մէկ քանի անյառող փորձերէ վերջ կրցաւ սակայն կարեւոր քանակութեամբ զէնք ու

ռազմավթերը ցամաք հանել կղզին եւ միանալ իր հայրենակիցներուն։ Երկու տարուան միջոցին ծերունի զօրպետը երիտասարդի աշխոյժով լեռնէ լեռ քաղաքէ քաղաք արշաւեց, մէկ քանի փայլուն յաղթութիւններ տարաւ, մէկ քանի դաւաճներ դրաւ եւ պահպանեց համեմատաբար աւելի զօրաւոր թշնամիին դէմ, մինչեւ որ ամերիկեան բանակը ցամաք ելաւ Սանթիակոյի քով։ Այդ քաղաքին գրաւման ատեն Քուպացի զօրապետին մատուցած օգնութիւնը եւ ցոյց տուած ճարտարութիւնը եւ քաջութիւնը զեռ երկի պատմութիւն է։

Քուպացիները պատգամաւորութիւն մը զրկեցին Ամերիկա հսն իրենց ազատարարներուն հետ խորհրդակցելու կղզւոյն ապագային մասին. այդ պատգամաւորութեան գլուխն էր ծերունի զօրապետը որուն համակրելի վէճը ամենուն սիրելի էր Ուաշինկթընի մէջ։ Մեծ յոյսեր ունէին իր հայրենակիցները այս սպիտակահեր զօրավարն որ սուր զործածելու ճարպիկութեամբ գիտէր նաեւ զրիչ շարժել, պատերազմի խաղերուն պէս գիտէր նաեւ զիւնանալ գիտութեան դարձուածքները։ Այսպիսի բազմաբնույթ ժամանակի մը մէջ այսպիսի անձի մը կորուստը շատ ծանր հարուած մըն է Քուպացի հայրենասէրներուն որոնց աւանդուն համակրութիւնը եւ յարգանքը կը վայելէր զօրավարը։

Կարսիան ժօտէն ճանչցողները իր զինուորական եւ քաղաքագիտական տաղանդէն աւելի կը հիանան իր բարձր նկարագրին, բարոյականին սրբութեան եւ մարդասիրութեան վրայ։

Կաթոլիկ եկեղեցիէն վտարուած ազատ-որձեալի մը, սակայն, ինչպէս կ'ըսէ իր ընկերներէն մին, « իր կրօնքը որ բարի ըլլալ եւ բարի դործել էր, վեր կը ամէն սրիչ կրօնքէ։ Իր երկինքը իր ընտանիքն էր, հաւասար՝ ազատ Քուպան եւ սեղանը՝ ազատութիւնը որուն վրայ զսկեց իր կեանքը։ »

Վսեմ կեանքի վսեմ վերջարան մը. հոգեվարքի պահուն մահուան քրտինքը ճակտին հինաւորց զինուորը ինքզինքը կուտի զաշտը կը կարծէր, անկողնէն դուրս նետած բազուկները, աջ ձեռքը սեղմած իր երեւակայական սուրը, հրամաններ կուտար իր Քուպացի քաջերուն՝ ըՍպանիացիներուն վրայ յարձակելու. « Յառաջ, զինուորներ »։ Աս եղաւ յեղափոխականին վերջին խօսքը։

Ա. Տ.

ՀԱՍՏԷՆՆԻ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին։ Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոյար։

